

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ E-DISABILITY ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ  
ՆԵՐԴՐՄԱՆ ՓԱԹԵԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԱՍՀՆ-ՄԱԱՊՁԲ-22/36

ք. Երևան

« 17 » Ապրիլ 2022թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Պարզյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին տրամադրել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:



2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.8 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.9 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## 2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է **150 030 700** (Մեկ հարյուր հիսուն միլիոն երեսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԵՆԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 130 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները ԳՆՈՐԴ ԿԱՃԱՌՈՂ

ՀՀ աշխատանքի և սոցիալական  
հարցերի նախարարության  
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3  
ՀՎՀՀ՝ 01506515  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ՝ 900011041242  
Գլխավոր քարտուղար

«Նորք» սոցիալական  
ծառայությունների տեխնոլոգիական և  
իրազեկման կենտրոն» հիմնադրամ  
ՀՀ, ք. Երևան, Երևան Կարապետ  
Ուլենցու փող., 68 շենք  
ՀՎՀՀ՝ 02602449  
«ԱրդշինԲանկ» ՓԲԸ  
Հ/Հ՝ 2480102656710000

  
/ստորագրություն/

Գործադիր տնօրեն՝  
  
/ստորագրություն/ Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	48331100/1	e-Disability տերմեկատվական համակարգի մշակման և ներդրման տեխնիկական պահանջները ներկայացվում է ստորև*	դրամ	150,030,700	1	ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 25.12.2022թ.

Հ/Հ	Փուլը	Արժեքը	Կատարման վերջնաժամկետը
1.	Առաջին փուլ՝ Հետազոտություն և պահանջների սահմանում	20,000,000 ՀՀ դրամ	Մինչև 2022թ. նոյեմբերի ավարտ
2.	Երկրորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի մշակում 7.2. կետով սահմանված API-ի մշակում/ծրագրավորում և Տվյալների հավաքագրման նախատիպերի ստեղծում մոդուլների շրջանակներում	65,687,800 ՀՀ դրամ	Մինչև 2022թ. նոյեմբերի ավարտ
3.	Երրորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի մշակում 7.2. կետով սահմանված Վինետ մասնագետների և բժշկական փորձագետների բանկ ենթահամակարգի կառավարման, Ծառայությունների անհատական ծրագրի ենթահամակարգի բազային և Միգրացիա մոդուլների շրջանակներում	20,000,000 ՀՀ դրամ	Մինչև 2022թ. դեկտեմբերի ավարտ
4.	Չորրորդ փուլ՝ Տեղակայում, փաստաթղթավորում, թեստավորում և վերապատրաստում	13,718,400 ՀՀ դրամ	Մինչև 2022թ. դեկտեմբերի ավարտ
5.	Հինգերորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի հանձնում պիլոտային շահագործման	30,624,500 ՀՀ դրամ	Մինչև 2022թ. դեկտեմբերի ավարտ
<b>Ընդամենը՝</b>		<b>150,030,700 ՀՀ դրամ</b>	

1. Հապավումներ և սահմանումներ

ՀՀ	Հապավում	Բացվածք
1.	ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2.	ԱՆ	Առողջապահության նախարարություն
3.	ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային Կազմակերպություն
4.	ԿԳՄՍՆ	Կիրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
5.	ԱՎՎ	Անձնագրերի և վիզաների վարչություն
6.	ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
7.	ԲՍՓ	Բժշկասոցիալական փորձաքննություն
8.	ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
9.	ՏՀՏ	Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ
10.	ՏՀ	Տեղեկատվական համակարգ
11.	ՏՇ	Տեղեկատվական շտեմարան
12.	ՖՄԴ	Ֆունկցիաների միջազգային դասակարգում
13.	Փյունիկ ՏՀ	Հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման (Փյունիկ) ՏՀ
14.	Պրորթեզ ՏՀ	Պրորթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման ՏՀ
15.	ԲՊՌ ՏՇ	ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրի ՏՇ
16.	ՔԿԱԳ ՏՇ	ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության ՏՇ
17.	ՊԵԿ ՏՇ	ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի ՏՇ

## 2. Նախապատմություն

Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման շրջանակներում անձի հաշմանդամությունը սահմանող ԲՄՓՀ-ների փոխարեն անձի ֆունկցիոնալության գնահատումը կիրականացնի նախարարության համակարգում նոր ստեղծված միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) համապատասխան ստորաբաժանումը: ՄՍԾ տարածքային կենտրոնները կունենան անհրաժեշտ պայմաններ, գործիքներ, սարքավորումներ և բազմամասնագիտական թիմ՝ գնահատման գործընթացներն Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) հիման վրա պատշաճ կերպով իրականացնելու համար: Այս համատեքստում խիստ կարևոր է նոր E-Disability տեղեկատվական համակարգի ներդրումն ու անխափան աշխատանքը:

Ներկայումս բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձանց վերաբերյալ տվյալները ԲՄՓՀ-ների կողմից մուտքագրվում են Հաշմանդամների հաշվառման Փյունիկ ՏՀ, որը հնարավորություն է տալիս իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառում, ստանալ տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց մասին, մուտքագրել վերականգնողական անհատական ծրագրերը, ձևավորել և տպել քաղվածքներ, ուղեգրեր և ծանուցումներ, ձևավորել հաշվետվություններ: Փյունիկ ՏՀ-ին զուգահեռ գործում է նաև Պրոթեզ ՏՀ-ն:

Տեղեկատվական համակարգը տվյալները մուտքագրելիս ինքնաշխատ նույնականացնում է հաշվառվող անձի անձնական տվյալները՝ Բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ, ինչպես նաև անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման տեղեկատվական շտեմարանի տեղեկատվության հետ: Համակարգում առկա տեղեկատվությունը կիրառվում է սոցիալական ոլորտում գործող այլ տեղեկատվական համակարգերում համադրումներ իրականացնելու համար՝ սոցիալական ծառայությունների մատուցման նպատակով որոշումների կայացման գործընթացում:

Առաջարկվող նոր մոտեցումների ներքո անհրաժեշտ է մշակել նոր E-Disability տեղեկատվական համակարգ՝ համապատասխանեցնելով այն «Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ծրագրում» ամրագրված նոր մոտեցումներին, գործիքակազմին և գործընթացներին: Մշակվող E-Disability տեղեկատվական համակարգը կհանդիսանա ինտեգրված սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգի ենթահամակարգերից մեկը:

## 3. Տեղեկատվական համակարգի նպատակը

E-Disability տեղեկատվական համակարգի ներդրման նպատակն է ստեղծել և վարել՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ներկայումս մշակվող միասնական տեղեկատվական համակարգի ներքո տեղեկատվական ենթահամակարգ, որը հնարավորություն կտա.

- 1) ապահովել ֆունկցիոնալության գնահատման ենթակա անձանց մասին տվյալների հավաքագրումը, հաշվառումը և էլեկտրոնային գործի ձևավորումն ու վարումը,
- 2) ավտոմատացնել անձի ֆունկցիոնալության գնահատման և ծառայությունների տրամադրման գործընթացները ԱՀԿ ՖՄԴ հիման վրա մշակված հայաստանյան մոդելին

համապատասխան՝ նվազեցնելով մարդկային գործոնի միջամտությունն ու այդ գործոնով պայմանավորված ռիսկերը, գնահատման գործընթացը դարձնելով ավելի դյուրին և թափանցիկ,

3) ապահովել գնահատող մասնագետների ռեեստրի ձևավորումն ու ըստ գնահատում անցնող անձի ֆունկցիոնալության խնդրի համապատասխան գնահատման հանձնաժողովների առցանց և պատահականության սկզբունքով ձևավորումը,

4) ապահովել գերատեսչությունների միջև տեղեկատվության ինքնաշխատ փոխանակումը, բացառելով տարբեր գերատեսչությունների կողմից նույն տվյալների հավաքագրումը, կրճատել տվյալների հավաքագրման վրա ծախսվող ռեսուրսները,

5) ապահովել հավաստի և ամբողջական վիճակագրության տրամադրումը՝ անձանց ֆունկցիոնալության գնահատման, տրամադրվող ծառայությունների և արդյունքների վերաբերյալ:

#### **4. Նախագծի նպատակները**

Նախագծի նպատակը անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրումն է, ինչպես նաև գործող համակարգի խնդիրների կարգավորումը՝ նորագույն մեխանիզմների ներդրմամբ: Այդ խնդիրներն են՝

Հայաստանում անձի հաշմանդամությունը սահմանող բժշկասոցիալական փորձաքննության իրավասությունը վերապահված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) Միասնական սոցիալական ծառայությանը (ՄՄԾ): ՄՄԾ-ն ունի 14 բժշկասոցիալական փորձաքննական խմբեր, որոնք բժշկասոցիալական փորձաքննություն են իրականացնում 49 տարածքային կենտրոններում:

Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանի որոշման, անձին հաշմանդամ ճանաչելու՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հաշմանդամության խումբ սահմանելու, հաշմանդամ չճանաչելու, հաշմանդամության ժամկետ, պատճառական կապ, մահվան պատճառական կապ, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճան որոշելու, հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիր մշակելու և հաստատելու, ժամանակավոր անաշխատունակության ժամկետը երկարաձգելու մասին որոշում ընդունելու նպատակով:

Հաշմանդամության գնահատման գործող համակարգում այսօր առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, այդ թվում՝

1. Առաջին անգամ հաշմանդամության կարգավիճակ ստանալու համար անձը բժշկասոցիալական փորձաքննության է ուղեգրվում բժշկական կազմակերպությունների կողմից՝ համապատասխան ուղեգրի (ձև 088) հիման վրա, որն ամբողջական տեղեկատվություն չի պարունակում անձի առողջության, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումների մասին: Այդ կազմակերպությունների կողմից տրված փաստաթղթերը հաճախ մանրամասն չեն նկարագրում անձի առողջական խնդիրները, ծանրության աստիճանը և առողջությանն առնչվող այլ մանրամասներ: Այս հանգամանքը ԲՄՓ իրականացնող մարմիններին հայեցողական որոշումներ կայացնելու տեղիք է տալիս: Խնդիրներ են առաջանում նաև անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը ներկայացնելու հարցում՝ քաղաքացիները ստիպված են լինում տարբեր բժշկական կազմակերպություններ դիմել պահանջվող փաստաթղթերը ԲՄՓՀ ներկայացնելու համար:

2. ԲՄՓ հանձնաժողովների կազմերը և նրանց կողմից սպասարկվող տարածքները նախապես սահմանված են, ինչը կոռուպցիոն ռիսկ է պարունակում՝ նախնական պայմանավորվածություններ ձեռք բերելու տեսանկյունից:

ԲՍՓՀ կազմում միայն բժիշկներ են, հիմնականում թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, մանկաբույժ և գործավարությունն իրականացնում է բուժվիճակագիր: Գործում են նաև 3 բժշկասոցիալական փորձաքննական մասնագիտացված հանձնաժողովներ՝ ակնաբանական, հոգեբուժական և մանկական, որոնք սպասարկում են միայն Երևան քաղաքը և հարակից 4 մարզերը՝ Արմավիր, Արարատ, Արագածոտն, Կոտայք (մասնագիտացված հանձնաժողովների այցելության միջոցով): Բոլոր դեպքերի և բոլոր տարիքային խմբերի համար միևնույն բժշկական կազմով հանձնաժողովը չի կարող բազմակողմանի գնահատել անձի ֆունկցիոնալությունը և սահմանել այն ծառայությունների կարիքը, որոնք կապահովեն նրա հիմնական իրավունքների իրացումը և սոցիալական ներառումը:

3. Անձի հաշմանդամության սահմանման հիմքում ընկած են առավելապես բժշկական չափորոշիչները, անձին հաշմանդամ ճանաչելիս հիմնականում հաշվի է առնվում նրա ախտորոշումը: Չնայած գնահատվում է նաև անձի կենսագործունեությունը, սակայն գնահատման չափանիշները հստակ նկարագրված չեն, ինչը նույնպես հայեցողական որոշումներ կայացնելու տեղիք է տալիս: Հաշմանդամության սահմանման չափորոշիչները պարունակում են դրոյթներ, որոնք հիմք են հանդիսանում սուբյեկտիվ մոտեցումների և կոռուպցիոն ռիսկերի շարժառիթների համար: Տարբեր ԲՍՓՀ-ներ նույն խնդիրներով տարբեր անձանց վերաբերյալ կարող են տարբեր որոշումներ կայացնել: Նույն ախտորոշման դեպքում ԲՍՓՀ մասնագետները կենսագործունեության սահմանափակման աստիճանները որոշելիս կարող են ցուցաբերել տարբեր մոտեցումներ, ինչը բողոքարկումների տեղիք է տալիս:

4. Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի, 2 տարի, մինչև 18 տարին լրանալը կամ անժամկետ: Անժամկետ հաշմանդամություն ստացած անձիք նորից գնահատում չեն անցնում և, կարծես, դուրս են մնում համակարգից՝ փոփոխվող կենսագործունեության գնահատման և անհրաժեշտ ծառայությունների մատուցման առումով: Տարիների ընթացքում փոխվում է ինչպես նրանց առողջությունը, այնպես էլ անհրաժեշտ ծառայությունների կարիքը: Սակայն նրանք օգտվում են միայն տարիների առաջ սահմանված ծառայություններից, անկախ այն հանգամանքից դրա կարիքն ունեն, թե ոչ:

5. Գործող չափորոշիչներով հաշմանդամության սահմանման ժամանակ հաշվի չեն առնվում այն միջավայրային գործոնները, որոնք ազդեցություն ունեն անձի լիարժեք գործունեության վրա և կանխորոշում են անձի կատարողականությունը: Թեև հաշմանդամության սահմանման արդյունքում անձի համար սահմանվում է վերականգնողական անհատական ծրագիր (ՎԱԾ), սակայն դրա արդյունավետությունը գնահատել չի հաջողվում, տրամադրած ծառայությունները չեն վերահսկվում կամ այդ ծառայությունները չստանալու պատճառը չի ուսումնասիրվում: Չկա հետադարձ կապ շահառուների հետ:

6. Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում սահմանվում է հաշմանդամության առաջին, երկրորդ, երրորդ խումբ և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների ծանրությունը չի տարբերակվում և հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար սահմանվում են նույն ծառայությունները:

7. Հաշմանդամություն ունեցող երեխաների պարագայում մինչև 18 տարին լրանալը հաշմանդամություն սահմանելու դեպքում, այդ ժամանակահատվածում որևէ փոխադարձ կապ չի հաստատվում երեխայի և նրա ծնողների հետ, ինչը թույլ չի տալիս տեսնել երեխայի առողջության և կարգավիճակի փոփոխությունները և տարիքային առանձնահատկություններին համապատասխան ծառայություններ և աջակցություն սահմանել, որն էլ մեծ հավանականությամբ, կարող է հանգեցնել երեխայի վիճակի ծանրացմանը և սոցիալական մեկուսացման խորացմանը:

8. Ամեն տարի պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվում են բազմաբնույթ ծառայություններ, սակայն դրանք համակարգված չեն, թույլ է միջգերատեսչական համագործակցությունը, որի արդյունքում ցածր է այդ ծրագրերի ծախսարդյունավետությունը: Չնայած սոցիալական պաշտպանության ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի համար պետական բյուջեից հատկացվում են զգալի միջոցներ, սակայն չկան մշտադիտարկման և գնահատման հստակ և լիարժեք մեխանիզմներ:

9. ԲՍՓՀ տեղակայման վայրերում հիմնականում չկան պատշաճ պայմաններ շահառուներին սպասարկելու համար, տարածքները մատչելի չեն և չկան համապատասխան սարքավորումներ ֆունկցիոնալության գնահատման համար:

## 5. Բիզնես գործընթացների նկարագրություն

Բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձանց վերաբերյալ տվյալները ԲՍՓՀ-ների կողմից մուտքագրվում են Հաշմանդամների հաշվառման Փյունիկ ՏՀ, որը հնարավորություն է տալիս ստանալ տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց մասին ըստ սեռի, տարիքի, կրթության, զբաղվածության, ընտանեկան կազմի, ըստ բնակության վայրի և տարածքային բաշխվածության, հիվանդությունների, հաշմանդամության խմբերի և այլն: Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս նաև իրականացնել.

- Վերականգնողական անհատական ծրագրի մուտքագրում,
- Քաղվածքների, ուղեգրերի և ծանուցումների ձևավորում և տպում,
- Հաշվետվությունների (ստանդարտ և ոչ ստանդարտ) ձևավորում:

Տեղեկատվական համակարգը տվյալները մուտքագրելիս ինքնաշխատ նույնականացնում է հաշվառվող անձի անձնական տվյալները՝ Բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ, ինչպես նաև անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման տեղեկատվական շտեմարանի տեղեկատվության հետ: Համակարգում առկա տեղեկատվությունը կիրառվում է սոցիալական ոլորտում գործող այլ տեղեկատվական համակարգերում համադրումներ իրականացնելու համար՝ սոցիալական ծառայությունների մատուցման նպատակով որոշումների կայացման գործընթացում:

Տեղեկատվության մուտքագրումը համակարգ չի իրականացվում փորձաքննությանը զուգահեռ: ԲՍՓՀ բժիշկ-փորձագետները, չնայած այն հանգամանքին, որ ունեն համակարգից օգտվելու համապատասխան իրավասություն, մուտքագրման ենթակա տեղեկատվությունը տրամադրում են բուժվիճակագիրներին ձեռագրով գրված, ուլքեր, չտիրապետելով բժշկասոցիալական փորձաքննության չափանիշներին, մուտքագրում են ԲՍՓ գործում առկա տեղեկատվությունը, շատ հաճախ սխալ կամ թերի:

Փյունիկ ՏՀ-ում հաշմանդամության սահմանման գործընթացն ավտոմատացված չէ, որի պարագայում մեծ է ոչ իրավաչափ և օբյեկտիվ որոշումների կայացման ռիսկը: Ելնելով այս հանգամանքից՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել և ներդնել նոր տեղեկատվական համակարգ, որը հիմնված կլինի Հիվանդությունների միջազգային դասակարգչի (ՀՄԴ) և ՖՄԴ փոխգործակցության վրա, որոնց գործարկման արդյունքում ձևավորված տվյալների վերլուծության հիման վրա տեղեկատվական համակարգի կողմից ավտոմատացված եղանակով դուրս կբերվի անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի մասին համապատասխան որոշումը՝ բացառելով սուբյեկտիվության գործոնը:

Առաջարկվող նոր մոտեցումների ներքո անհրաժեշտ է մշակել նոր E-disability տեղեկատվական համակարգ, համապատասխանեցնելով այն նոր գործիքա-կազմին ու գնահատման գործընթացներին և ապահովել միջգերատեսչական տեղեկատվության փոխանակումը՝ նվազեցնելով մարդկային գործոնի միջամտու-թյունն ու այդ գործոնով պայմանավորված ռիսկերը, գնահատման գործընթացը դարձնելով ավելի դյուրին և թափանցիկ:

## 6. Ծառայությունների/աշխատանքների շրջանակը

Տեղեկատվական համակարգի նախագծման և մշակման աշխատանքների շրջանակներում պետք է իրականացվեն հետևյալ հիմնական աշխատանքները՝

- 1) Ոլորտի (իրավական դաշտի) ուսումնասիրություն, ներառյալ ներկայումս առկա իրավական ակտերի նախագծերը
- 2) Քննարկումների կազմակերպում և իրականացում
- 3) Առաջարկությունների ներկայացում տեղեկատվական համակարգի կատարելագործման, խնդիրները վերհանելու և կարգավորելու ուղղությամբ.
- 4) Տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում, ներկայացում ԱՍՀՆ համապատասխան աշխատանքային խմբի կարծիքին, այնուհետև՝ ԱՍՀՆ հաստատման
- 5) Հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա տեղեկատվական համակարգի նախագծում, մշակում, թեստավորում և հանձնում ԱՍՀՆ համապատասխան աշխատանքային խմբին՝ թեստավորման
- 6) Նախարարության աշխատանքային խմբի կողմից դուրս բերված խնդիրների շտկում և տեղեկատվական համակարգի հանձնում աշխատանքային խմբին՝ պիլոտային շահագործման հանձնելու համար
- 7) Պիլոտային շահագործման արդյունքում դուրս բերված խնդիրների շտկում և տեղեկատվական համակարգի հանձնում՝ հաստատման
- 8) Տեղեկատվական համակարգի հանձնում ՀՀ ԱՍՀՆ-ին՝ սոցիալական պաշտպանության ոլորտի ՏՀՏ ենթակառուցվածքում այն տեղակայելու համար:

– Տեղեկատվական համակարգը պետք է համապատասխանի փոխգործելիության և այլ համակարգերի հետ ինտեգրելի լինելու պահանջին, որի շնորհիվ կստանա տվյալներ ինչպես ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի, այնպես էլ այլ գերատեսչությունների և կազմակերպությունների տվյալների շտեմարաններից և ըստ անհրաժեշտության տվյալներ կփոխանցի նրանց:

Տեղեկատվական համակարգը պետք է ինտեգրված լինի ՀՀ կառավարության փոխգործելիության հարթակին, որի միջոցով պետք է ստանա տվյալներ **Հավելված 1**-ում բերված գերատեսչություններից և կազմակերպություններից: ՏՀ-ն պետք է ունենա հնարավորություն ՀՀ կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով տվյալներ փոխանցելու այլ գերատեսչությունների և կազմակերպությունների:

### 6.1. Ծրագրային ապահովում

Ծրագրային ապահովումն իրականացնելու նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի հետևյալ պահանջների կատարումը՝

- Նախագծի իրականացման ողջ ընթացքում Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից պետք է կիրառվի նախագծի կառավարման Agile մենթոդաբանություն, որի

շրջանակներում պետք է գործածվի JIRA հավելված, որին պետք է ունենան հասանելիություն ՀՀ ԱՍՀՆ-ին Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից սահմանված անձինք,

- ՏՀ-ի բիզնես և տեխնիկական պահանջների, օգտվողների դերերի տիպերի և իրավասությունների, ՏՀ-ում ներառվելիք տվյալների ծավալի ուսումնասիրություն,
- իրականացված ուսումնասիրության հիման վրա տեխնիկական և ծրագրային միջոցների վերաբերյալ պահանջների սահմանում,
- ՏՀ-ի նախագծման և մշակման մանրամասն տեխնիկական առաջադրանքի մշակում, և ներկայացում ԱՍՀՆ-ին հաստատման:

Նախագծի ավարտին Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ԱՍՀՆ-ին հանձնի տեղեկատվական համակարգի ելքային կոդերը:

## 6.2. Թեստավորում

Տեղեկատվական համակարգի **փորձնական թեստավորումը (pilot testing)** պետք է իրականացվի ստորև թվարկված վայրերում՝

- ՀՀ ԱՍՀՆ
- ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ
- ՄՍԾ ՏԿ-ներ

Այս փուլում պետք է թեստավորվեն տեղեկատվական համակարգի աշխատանքային առանձնահատկությունները՝ օգտվողների տարբեր խմբերի գործառույթների հիման վրա:

**Օգտվողի ընդունման թեստավորում (user acceptance testing)**, որի ընթացքում պետք է փորձարկվեն տեղեկատվական համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը:

## 6.3. Տեղակայում

ՏՀ-ի նախագծման և մշակման գործընթացում Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից պետք է առանձնացված լինեն երեք հիմնական միջավայրեր՝ ծրագրային ապահովման (development) և թեստավորման (staging), և իրական (production) որոնք պետք է տեղակայված լինեն ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից պատվիրակված կազմակերպությունում, և որոնցից յուրաքանչյուրին ըստ անհրաժեշտության՝ պետք է հնարավոր լինի տալ հասանելիություն:

ՏՀ-ի տեղակայումը շահագործման համար պետք է իրականացվի երկու հիմնական փուլով՝

- Փորձնական տեղակայում
- Պիլոտային տեղակայում:

## 6.4. Տվյալների միգրացիա

Այս նախագծի շրջանակում չի նախատեսվում իրականացնել տվյալների լայնամասշտաբ միգրացիա, քանի որ տվյալ համակարգի տրամաբանությունը ամբողջովին տարբերվում է գործող համակարգերի տրամաբանությունից: Փոխարենը ներկայումս գործող Հաշմանդամություն ունեցող անձանց «Փյունիկ» տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարանից յուրաքանչյուր շահառուի համար ըստ անհրաժեշտության կապահովվի առանձին տվյալների ստացում e-Disability համակարգում:

## 6.5. Վերապատրաստումներ

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների շրջանակներում Ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է իրականացնի համակարգից օգտվողների

վերապատրաստում, համակարգի պիլոտային ներնդումից և հանձնումից հետո՝ աշխատանքային միջավայրում:

### 6.6. Փաստաթղթավորման պահանջներ

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը ՏՀ ներդրման շրջանակներում պետք է մշակի և ՀՀ ԱՍՀՆ-ին տրամադրի հետևյալ փաստաթղթերը՝

- Տեխնոլոգիայի նկարագրությունն ապահովող համակարգային փաստաթղթեր,
- Գործառնական պահանջների փաստաթղթավորում, ներառյալ գործի կանոնները:

### 6.7. Ներդրման աջակցություն

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է ՀՀ ԱՍՀՆ-ում ՏՀ-ի ներդրման ստանդարտ միջավայր, և ուղեցույցներ ապահովել: Միջավայրը ներառում է DevOps-ի լավագույն փորձի հիման վրա շարունակական ինտեգրման/շարունակական ներդրման գործընթացների (continuous integration/continuous delivery pipelines) իրականացման ժամանակակից մշակումների ապահովում, որոնք կառանձնացնեն մշակման, փորձարկման և իրականացման միջավայրերը (development, staging, production):

### 6.8. Սպասարկում

Համակարգի պաշտոնական հանձնում-ընդունումից հետո Ծառայություններ մատուցող կազմակերպությունը կիրականացնի համակարգի շահագործման սպասարկում ՀՀ ԱՍՀՆ հետ կնքվող ամենամյա պայմանագրի շրջանակներում:

Համակարգի սպասարկման ընթացքում Ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է առաջնորդվի շահագործման ընթացքում ի հայտ եկած սխալների (errors) և վրիպակների (bugs) շտկման պայմաններով: Անհրաժեշտ է նաև սահմանել համակարգի թարմացումների տրամադրման, և տեղադրման ընթացակարգ, որը կհաստատվի ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից:

Ծրագրային ապահովման փաթեթի սխալները (errors) կարող են առաջ բերել տեղեկատվական համակարգի ոչ ճշգրիտ գործունեության և ներառեն հետևյալ հիմնական խմբերը՝

- մուտքագրված տվյալներն ամբողջովին չեն պահպանվում տվյալների շտեմարանում,
- տվյալների շտեմարանի հաշվարկման դաշտերը չեն ներկայացնում ճշգրիտ արժեքը՝ հաշվարկման բանաձևում առկա սխալների հետևանքով,
- գործարքներին համապատասխանող գործողությունները չեն իրականացվում մեկ գործարքի (transaction) շրջանակներում,
- հաշվետվությունները չեն ներկայացնում ակնկալվող արդյունքները,
- ծրագրային ապահովման փաթեթն առաջացնում է անլուծելի խնդիրների հաղորդագրություններ և ելք է կատարում առանց օգտվողի միջամտության,
- ծրագրային ապահովման փաթեթի պատասխանը ուշանում է, և այդ ուշացումը կապված չէ տվյալների շտեմարանի գործունեության հետ:

Համակարգչային ծրագրի վրիպակները (bugs) ներառում են ծրագրի այն բնութագրիչները, որոնք չեն առաջացնում տվյալների ամբողջականության, ստացվող հաշվետվությունների հաշվարկների խախտում:

## 7. Տեխնիկական պահանջներ

### 7.1. Սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել

Հիմնական սկզբունքներն ուղղված են ծրագրային ապահովման և ենթակառուցվածքի բաղադրիչների բոլոր շերտերին՝ նպատակ ունենալով ապահովել մշակված լուծումների մասշտաբայնություն, վերաօգտագործման հնարավորություն, փոխգործելիություն և մոդուլյարություն: Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացված են դիտարկման ենթակա սկզբունքները՝

#### 7.1.1. Ինտուիտիվ դիզայն և գործածելիություն

#### 7.1.2. Կանխադրված/լռելյայն անվտանգ (Secure by design)

- Անվտանգություն
- Միջադեպի կառավարում (Incident management)
- Վթարային վերականգնում (Disaster recovery)

#### 7.1.3. Տեխնիկական սպասարկելիություն (maintainability), մոդուլյարություն (modularity) և վերաօգտագործելիություն (reusability)

#### 7.1.4. Փոխգործելիություն

#### 7.1.5. Արդյունավետություն

#### 7.1.6. Կոդի հենք (Codebase)

- Տարբերակի վերահսկում (Version control)
- Փաստաթղթավորում
- Ճյուղավորման ռազմավարություն (Branching strategy)
- Շարունակական ինտեգրման/շարունակական ներդրման գործընթացների իրականացում (Implementation of CI/CD pipelines)

#### 7.1.1. Ինտուիտիվ դիզայն և գործածելիություն

**Ընդհանուր պահանջներ:** Ընդհանուր առմամբ, օգտվողի՝ դիզայնի հետ կապված փորձի ձևավորման գործընթացին պետք է նախորդի դիզայնի մտածողության մոտեցումը (design thinking approach), որը բաղկացած է հետևյալ հինգ փուլերից՝

1. Հասկանալ օգտվողին՝ ապրումակցել նրան
2. Սահմանել խնդիրը՝ բացահայտել օգտվողի կարիքները
3. Մտքեր հղանալ՝ դիզայնի համար գաղափարներ գեներացնել
4. Նախատիպեր ստեղծել՝ մտքերը որոշակի օրինակների վերածել
5. Փորձարկել՝ գնահատել դիզայնը:

Լավագույն հնարավոր արդյունքների հասնելու էական պայման է արագ նախատիպավորման և փորձարկման կարողությունների ապահովումը, որոնք պետք է հաստատվեն ՀՀ ԱՍՆ-ի կողմից: Ծառայություն մատուցող կազմակերպության համար խիստ կարևոր կլինի օգտվողների խմբերի տարբերակումը, անհատական մոտեցումների մշակումը, դիզայնի մտածողության՝ վերը նշված սկզբունքների կիրառումը և յուրաքանչյուր օգտվողի խմբի համար նախատիպերի տրամադրումը հաստատման համար:

**7.1.1.1. Օգտվողի ինտերֆեյսի հետ կապված նվազագույն պահանջները:** ՏՀ-ի ինտերֆեյսը պետք է այնպես նախագծված լինի, որ ինքնին բացատրելի լինի՝ առանց որևէ հատուկ ուսուցման: Նվազագույն պահանջները հետևյալն են՝

**7.1.1.2. Գործածելիության ցուցանիշների համակարգ:** Ծրագրային ապահովման գործածելիության ցուցանիշները պետք է սահմանվեն Ծառայություն մատուցող

կազմակերպության կողմից, չափվեն և փոփոխվեն ցանկացած ցածր ցուցանիշ բարձրացնելու համար:

- 7.1.1.3. **Կայունություն:** Օգտվողի ինտերֆեյսի դիզայնը պետք է նույնը լինի իր բոլոր բաղադրիչներում:
- 7.1.1.4. **Նավիգացիա:** Բովանդակությունը պետք է ցուցադրվի հստակ, միանշանակ ըմբռնելի, հեշտ ընթեռնելի եղանակով և պետք է ապահովի հեշտ նավիգացիա:
- 7.1.1.5. **Արձագանքող դիզայն:** Ինտերֆեյսը պետք է արձագանքող լինի թե համակարգչային, թե բջջային հարթակներում հնարավորինս լավ փորձ ապահովելու համար: Ինտերֆեյսը պետք է հեշտությամբ ընդունի էկրանի տարբեր ստանդարտ չափսերը և անթերի աշխատի առավել օգտագործվող վեբ դիտարկիչների հետ, ներառյալ, բայց չսահմանափակվելով Google Chrome-ը, Mozilla Firefox-ը(բոլոր տարբերակները սկսած առնվազն 2018 թվականից կամ այդ ամսաթվից ավելի ուշ թողարկված դիտարկիչների դեպքում):
- 7.1.1.6. **Տառատեսակներ:** Տառատեսակները պետք է համապատասխանեն 8 բիթանոց Unicode Transformation Format (UTF-8) կոդավորմանը: Տառատեսակի չափը պետք է ապահովի տեքստի ընկալման հարմարավետությունը թույլատրելի նվազագույն լուծմամբ: Սա անհրաժեշտ է նաև լեզուների և տառատեսակների մուտքի համար:
- 7.1.1.7. **Տեղեկատվության ձևաչափ:** Ամսաթվերի ձևաչափեր, անուններ, օրացույցներ և նմանատիպ հիմնական տեղեկատվությունը պետք է համապատասխանի այլ պետական տեղեկատվական համակարգերի կողմից ներկայումս կիրառվող չափանիշներին (օր. e-citizen.am, Կառավարության փոխգործելիության հարթակ (ԿՓՀ), բնակչության պետական ռեգիստր, իրավաբանական անձնանց պետական ռեգիստր և այլն):
- 7.1.1.8. **Չափման միավորներ:** Կօգտագործվեն մետրային համակարգի չափման միավորներ:
- 7.1.1.9. Frontend-ը (արտաքին ինտերֆեյսը) օգտվողի՝ համակարգի հետ փոխազդեցության միջերեսն է: Համակարգը պետք է ապահովի արձագանքող վեբ ինտերֆեյս (տարբեր, լայնորեն օգտագործվող պլանշետների և հեռախոսների համար) և բջջային հավելված՝ վերջնական օգտվողների համար:
- 7.1.1.10. Համակարգը պետք է վեբի վրա հիմնված հավելված լինի, որը պետք է աշխատի ինտերնետի և կառավարության լրկալ ցանցի միջոցով ԱՍՀՆ-ի տարածքում և օգտագործի ինտերնետ (վեբի վրա հիմնված) ԱՍՀՆ-ից դուրս:
- 7.1.1.11. Համակարգը պետք է ապահովի օգտվողի համար հարմար ինտերֆեյս, ինչպես նաև հեշտ նավարկվող և արագ բեռնվող լինի::
- 7.1.1.12. Համակարգը պետք է ներառի ֆորմալ և տրամաբանական սխալի ստուգումներ և վավերացումներ տվյալների ամբողջականությունն ու որակը ապահովելու համար:
- 7.1.1.13. Այն պետք է ունենա նաև հիշեցումներ և ահազանգեր ուղարկելու ներկառուցված հնարավորություն:

### 7.1.2. Կանխադրված/լռեյայն անվտանգ (Secure by design)

**Ընդհանուր պահանջներ:** Ծրագրային ապահովման հավելվածով տվյալների և օգտվողների անվտանգությունն ու գաղտնիությունը պետք է առաջնահերթություն համարվի և ապահովվի

անվտանգության համապատասխան բոլոր մարտավարությունների և օրինաչափությունների կիրառումը:

Անվտանգության վերահսկողության հիմքում պետք է լինի տեղեկատվական անվտանգության եռյակը՝ գաղտնիությունը (confidentiality), անվտանգությունը (security) և հասանելիությունը (availability), ինչպես նաև պաշտպանություն պահանջող ակտիվների արժեքի հստակ ըմբռնումը:

Բոլոր ծածկագրերը պետք է վիրուսներից, չարամիտ ծրագրերից և սողանցքներից զերծ լինեն: Կողը չպետք է պարունակի հետևող պիքսելներ կամ որևէ հետևման տեխնոլոգիա, որը հատուկ փաստաթղթավորված չէ: Պետք է կիրառվի անվտանգ ծածկագրման պրակտիկա՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝

- Մուտքային արժեքների վավերացում,
- Հնարավորինս պարզ դիզայն,
- Թույլտվությունների (սպիտակ ցուցակի) վրա հիմնված մուտքի վերաբերյալ որոշումների կայացում և հավատարմություն նվազագույն արտոնությունների (least privilege) սկզբունքին,
- Տվյալների մաքրում,
- Կողավորման ապահով չափանիշների ընդունում,
- Խորը պաշտպանության կիրառում՝ բազմաշերտ պաշտպանության մեխանիզմների ներդրմամբ,
- Որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների ընդունում
- Ժամանակի կենտրոնացված սինխրոնիզացիա (centralized time synchronization source) բոլոր միկրոսերվիսների, տվյալների աղբյուրների և տեղեկամատյանների համար:

### **7.1.3. Մասշտաբայնություն, սպասարկելիություն, մոդուլյարություն և բազմագործածելիություն**

Ընդհանուր սպասարկելիությունը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով հետևյալ հասկացությունները՝ մոդուլյարությունը, հասկանալիությունը, փոփոխելիությունը, փորձելիությունը, վերաօգտագործելիությունը: Այստեղ հիմնական պահանջն է հետևել համակարգերի կառուցվածքի և նախագծման լավագույն փորձին, որը թույլ կտա ստանալ ֆունկցիոնալ և բարձր կատարողականով մասշտաբայնություն՝ նվազագույն ջանքերով մշակված հավելվածի վրա ավելացնելով ապագա կառուցվածքային տարրեր (մոդուլներ) և առանց ազդելու համակարգի ընդհանուր կառուցվածքի և արտադրողականության վրա:

### **7.1.4. Ինքնզրում և փոխգործելիություն**

Նպատակ ունենալով օգտագործել տարբեր պետական տվյալների շտեմարաններում արդեն պահված տվյալների ողջ ներուժը՝ ՏՀ-ի համար կենսական նշանակություն ունի առկա ներքին ռեզիստրներին, ՀՀ Կառավարության փոխգործելիության հարթակին (ԿՓՀ) և անհրաժեշտության դեպքում այլ արտաքին շտեմարաններին միացված լինելը, որոնք ներկայումս ԿՓՀ-ի մի մաս չեն: ՏՀ-ի կառուցվածքը պետք է նախագծված լինի այնպես, որ հնարավոր լինի նվազագույն ջանքեր գործադրել այլ հարթակների հետ ինտեգրման համար (պահանջվող ինտեգրացիաների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ներկայացված են 7.8 բաժնում):

### **7.1.5. Արդյունավետություն**

Համակարգը պետք է ապահովի հաշվողական ռեսուրսների (հիշողություն, քեշ, պրոցեսոր, սկավառակի տարողունակություն) և ցանցային միացումների արդյունավետ օգտագործում՝ ամպային ձևաչափում կամ ֆիզիկական տարածքում: Այս առումով հաշվի են առնվում նաև տվյալների հասանելիության արդյունավետությունը, տվյալների կառավարումը և օգտագործված տվյալների շտեմարանի կառավարման համակարգի ծածկագրման լավագույն փորձին համապատասխանելը:

### **7.1.6. Կոդի հենք (Codbase)**

**Տարբերակների կառավարում (version control):** ծրագրակազմի մշակման ընթացքում ծրագրային կոդի փոփոխություններին հետևելու համար պահանջվում է օգտագործել տարբերակների կառավարման լավ հայտնի համակարգ, ինչպիսին է Git-ը:

### **Ճյուղավորման ռազմավարություն (Branching strategy)**

Ճյուղավորման ռազմավարությունը պետք է ընտրվի այնպես, որ ապահովվի ներքին/արտաքին շահագրգիռ կողմերի միջև հեշտ համագործակցություն և հետևյալը՝

- Հրապարակման ենթակա կոդի առկայություն՝ անկախ մշակման ընթացքում գտնվող ֆունկցիոնալությունից և թույլ տալով արագ թողարկումներ և նախատիպերի պատրաստում:
- Այն պետք է հնարավորություն տա անհրաժեշտության դեպքում անցնել ավելի հին թողարկված տարբերակի (օրինակ՝ վերջին թողարկված տարբերակում կրիտիկական վրիպակի հայտնաբերման դեպքում):
- Այն պետք է ապահովի կոդերը ժամանակին և պատշաճ կերպով վերանայելու հնարավորություն:

### **Շարունակական ինտեգրման/շարունակական ներդրման գործընթացներ (CI/CD)**

Շարունակական ինտեգրման/շարունակական ներդրման գործընթացները պետք է օգտագործվեն ծրագրային ապահովման ներդրման գործընթացն ավտոմատացնելու, ձեռքով սխալները նվազագույնի հասցնելու, մշակման հետադարձ ստանդարտ օղակներ և արտադրանքի արագ կրկնություններ ապահովելու համար:

### **7.1.7. Արդիականության պահպանում**

Հետևյալ մոտեցումները կդիտարկվեն ընդհանուր համակարգի արդիականության պահպանման և դրա կյանքը երկարացնելու նպատակով՝

- Միայն քաջածանոթ, ոլորտում ընդունված բաղադրիչներ, հարթակներ, շրջանակներ և ծրագրավորման գործիքների կիրառում:
- Արտաքին կախվածությունների վերացում և մատակարարի ագնոստիկ (supplier agnostic) մոտեցման պահպանում:
- Աջակցություն և սպասարկում: Աջակցության շրջանակ պետք է մշակվի համակարգի պատշաճ և անվտանգ սպասարկում և կատարելագործում ապահովելու համար:

## **7.2. ՏՀ հիմնական մոդուլները**

E-Disability տեղեկատվական համակարգի հիմնական մոդուլներն են՝

1. API-ի մշակում/ծրագրավորում
2. Տվյալների հավաքագրման նախատիպերի ստեղծում

3. Վինետ մասնագետների և բժշկական փորձագետների բանկ ենթահամակարգի կառավարման մոդուլ
4. Ծառայությունների անհատական ծրագրի ենթահամակարգի բազային մոդուլ
5. Միգրացիա

### 7.3. ՏՀ օգտվողները

ՏՀ-ում պետք է առանձնացված լինեն հետևյալ օգտվողների տեսակները՝

1. **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ստորաբաժանումները** – համակարգում առկա բոլոր գործերի, հավաքագրված տվյալների դիտման, վերլուծություններ կատարելու, հաշվետվություններ արտածելու իրավասություն
2. **Միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմինների համապատասխան աշխատողները (գործ վարողը)** - տվյալների մուտքագրման, համակարգում առկա իր կողմից մուտքագրված գործերի, հավաքագրված տվյալների դիտման, վերլուծություններ կատարելու, հաշվետվություններ արտածելու իրավասություն
3. **Մասնագետների ռեեստրում գրանցվողները** – իր տվյալների մասով մուտքագրման, խմբագրման, դիտման իրավասություն
4. **Գնահատող մասնագետների ռեեստրում ընդգրկված մասնագետները** - տվյալների մուտքագրման, համակարգում առկա իր կողմից մուտքագրված գործերի, հավաքագրված տվյալների դիտման իրավասություն

Բացի վերը նշված օգտվողներից ՏՀ-ի ինտերֆեյսը պետք է հնարավորություն տա ցանկացած պահի ստեղծել նոր օգտվողի տեսակ՝ կցելով նրան ցանկացած իրավասություն:

### 7.4. Ծրագրային ապահովման պահանջների մասնագրեր

Ծրագրային ապահովման պահանջների մասնագրերը, որոնք հանդիսանում են ծրագրակազմի ֆունկցիոնալության մանրամասները և դրա կատարման ակնկալիքները նկարագրող փաստաթղթերը, կմշակվեն Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից և կներառեն գործառնության բոլոր դեպքերը, որոնք անհրաժեշտ են սույն փաստաթղթում սահմանված գործառնական պահանջները իրականացնելու համար:

Մասնագրերը կստուգվեն և կհաստատվեն ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից (հավելյալ մանրամասների համար տես գլուխ 12):

Մասնագրերը առնվազն պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝


- Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների վերաձում,
- Հղումներ նախագծման այլ փաստաթղթերի (օր.՝ համակարգի փոխազդեցության դիագրամներ, կառուցվածքի նախագծում և այլն),
- Համակարգի գործառնային մանրամասն նկարագրություն, ներառյալ՝ օգտագործման դեպքերը,
- Օգտվողի դասեր և բնութագրեր,
- Աշխատանքային միջավայր,
- Նախագծման և իրականացման սահմանափակումներ,
- Օգտվողի փաստաթղթավորում,
- Ենթադրություններ և կախվածություններ,
- Արտաքին ինտերֆեյսի պահանջներ:

Մասնագրերում սահմանված գործածման դեպքերի յուրաքանչյուր սցենար պետք է առնվազն ներառի հետևյալը՝

- Հիմնական դերակատար - Այն շահագրգիռ կողմը, որը փոխգործակցում է համակարգի հետ իր գործառույթներից մեկը կատարելու համար,
- Շահագրգիռ կողմեր և շահեր - Շահագրգիռ կողմերը նրանք են, ովքեր կկրեն համակարգի հետ հիմնական դերակատարի փոխգործակցության ազդեցությունը,
- Նախապայմաններ- Պայմաններ են, որոնք արդեն պետք է բավարարված լինեն հիմնական դերակատարի համար՝ հնարավորություն ընձեռելով նրան փոխգործակցել համակարգի հետ և կատարել օգտագործման դեպքում սահմանված անհրաժեշտ գործողությունները,
- Հետպայման- Սա այն հնարավոր վիճակների ցանկն է, որոնցում համակարգը կարող է հայտնվել դեպքի գործարկումից հետո,
- Հիմնական սցենար- Օգտվողի և համակարգի փոխգործակցությունների քայլ առ քայլ նկարագրություն, ներառյալ յուրաքանչյուր քայլի մուտքերն ու ելքերը և համակարգի վիճակը,
- Ծրագրային ընդլայնումներ- Բոլոր հնարավոր բացառությունների (exceptions) մշակում, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ օգտագործման դեպքի փոխգործակցության ընթացքում,
- Հաջողության չափանիշներ- Այն պայմանները, որոնց հիման վրա օգտագործման դեպքը կհամարվի հաջողությամբ իրականացված:

### 7.5. Բիզնես և գործառույթային պահանջները

E-Disability տեղեկատվական համակարգում տվյալները հավաքագրվում և ձևավորվում են, ինչպես գնահատվող անձի կողմից տրամադրելու և համակարգի միջոցով ինքնաշխատ հաշվարկներ կատարելու, այնպես էլ ներքին և արտաքին տեղեկատվական համակարգերի հետ տվյալների փոխանակման միջոցով: Տեղեկատվության հոսքերն համակարգում պատկերված են ստորև բերված գծապատկերում, որի մանրամասները ներկայացվում են համակարգի գործընթացների նկարագրություններում:



## Գծապատկեր 1. E-Disability համակարգում տեղեկատվության հոսքերը

### Տեղեկատվական համակարգի հիմնական գործընթացները

#### **Գործընթաց 1. Դիմում և անձի էլեկտրոնային գործի կազմում**

Դիմում և էլեկտրոնային գործի կազմում գործընթացի նպատակն է՝

- համակարգ ներբեռնել դիմումատուի ներկայացրած դիմումը, փաստաթղթերը և ինքնագնահատման հարցաշարը.
- Կազմել անձի ֆունկցիոնալության գնահատման էլեկտրոնային գործը.
- Կատարել փոփոխություններ/լրացումներ օրենքով սահմանված կարգով, անձի ֆունկցիոնալության գնահատման էլեկտրոնային գործում և վարել էլեկտրոնային գործը:

#### **Գործընթացի քարտեզի նկարագրությունը**

Անձը/ներկայացուցիչը ֆունկցիոնալության գնահատման ուղեգրվելու նպատակով դիմում է համապատասխան բժշկական հաստատություն՝ Ֆունկցիոնալության գնահատման ուղեգիրը համապատասխան բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից ձևավորվում է առողջապահության նախարարության էլեկտրոնային համակարգում:

Անձի ֆունկցիոնալության գնահատման դիմումը և օրենքով պահանջվող այլ փաստաթղթերը կարող են ներկայացվել

- առձեռն՝ դիմողի բնակության վայրի ՄՄԾ տարածքային կենտրոն այցելելու միջոցով՝ ըստ հաշվառման կամ փաստացի բնակության վայրի,
- փոստային կապի միջոցով,
- առցանց՝ էլեկտրոնային եղանակով:

#### **Գործընթաց 2. Վիճակի մշակում**

Վիճակի մշակում գործընթացի նպատակն է՝

- Ավտոմատ, պատահականության սկզբունքով մասնագետների ռեեստրից ընտրել վիճակ մշակող մասնագետին.
- Ապահովել համապատասխան մասնագետի կողմից էլեկտրոնային վիճակի մշակման գործընթացը.
- Անձի էլեկտրոնային գործում ունենալ էլեկտրոնային լրացված վիճակը՝ գնահատման հանձնաժողովի մասնագետների ընտրությունը ապահովելու և անձի ֆունկցիոնալությունը գնահատելու համար:

#### **Գործընթաց 3. Անձի ֆունկցիոնալության գնահատում**

Անձի ֆունկցիոնալության գնահատում գործընթացի նպատակն է՝

- Ավտոմատ, պատահականության սկզբունքով մասնագետների ռեեստրից ընտրել անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի անդամներին և կազմակերպել գնահատման գործընթացը,
- Գնահատել անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը և կազմել ծառայությունների անհատական ծրագիրը, ծառայություն մատուցողների ցանկը, և ուղղորդել անձի ծառայության կարիքը ծառայություն մատուցողներին՝ անձի որոշմանը թողնելով, թե որ ծառայություն մատուցողից վերջինս կցանկանա ստանալ իր ծառայությունը,

- Անձին տրամադրել գնահատման որոշումը, ծառայությունների անհատական ծրագիրը, պահպանել հետադարձ կապ և շարունակել անձի էլեկտրոնային գործի վարումը:

### **ՄՄԾ փաստաթղթավարը՝**

- Ստանում է անձի կամ ներկայացուցչի դիմումը: Դիմումը, ինքնագնահատման թերթիկը մուտքագրում, իսկ ներկայացված այլ փաստաթղթերը անհրաժեշտության դեպքում կցում է էլեկտրոնային համակարգում:
- Դիմումը և կից փաստաթղթերն առձեռն ներկայացվելու դեպքում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, սկանավորում դրանք և ներբեռնում էլեկտրոնային հարթակ:., ապա ներբեռնվում է ինքնագնահատման հարցաշարը՝ դիմումատուի/ներկայացուցչի հետ համատեղ: Այնուհետև համակարգը գեներացնում է փաստաթղթերի ներբեռնման ծածկագիր-համարը, որը ուղարկվում/տրվում է դիմումատուին:
- Դիմումը և կից փաստաթղթերը փոստով ներկայացվելու դեպքում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, սկանավորում դրանք և ներբեռնում էլեկտրոնային հարթակ, ապա ներբեռնվում է ինքնագնահատման հարցաշարը: Այնուհետև համակարգը գեներացնում է փաստաթղթերի ներբեռնման ծածկագիր-համարը, որը ուղարկվում/տրվում է դիմումատուին: Եթե ուղարկված փաստաթղթերի մեջ բացակայում է ինքնագնահատման հարցաշարը, ապա այն էլեկտրոնային փոստով կամ փոստով ուղարկվում է դիմումատուին, որից հետո դիմումատուն պետք է այն լրացնի և ներկայացնի ՄՄԾ: Մինչև 16 տարեկանը ներառյալ տարիքի երեխաների ինքնագնահատման հարցաշարը լրացնում և ներկայացնում է ծնողը/ներկայացուցիչը: Ստանալուց հետո փաստաթղթավարն այն ներբեռնում է էլեկտրոնային հարթակ:
- Անձը հաստատող փաստաթղթի հիման վրա նույնականացնում է դիմումատուին:
- e-health, EMIS, Հարկատու 3 տեղակատվական համակարգերից, սոցիալական ապահովության տեղեկատվական շտեմարանից ներբեռնում է անհրաժեշտ տեղեկատվությունը, ամբողջականացնում է դիմողի էլեկտրոնային գործը և շարունակում է վարել անձի էլեկտրոնային գործը:
- Անձի էլեկտրոնային գործում առկա բժշկական հաստատության կողմից ներկայացված ուղեգրի համաձայն, տեղեկատվական համակարգի մասնագետների ռեեստրի վիճակ մշակողների բաժնում մուտքագրում է անձի հիմնական ախտորոշումն, ըստ ՀՄԴ 10 ծածկագրի և էլեկտրոնային գործի համարը:
- Տեղեկատվական համակարգը ինքնաշխատ, հաջորդականության սկզբունքով (այսինքն ստացած գործերը ըստ հերթականության ուղարկվում են վիճակ մշակողներին), ըստ ՀՄԴ 10-ի ընտրում է վիճակ մշակող մասնագետին, անկախ տարածքային բաժանումից և ինքնաշխատ դիմողի գործը կցում է վիճակ մշակող մասնագետին:

### **Վիճակ մշակող մասնագետը՝**

- Ստանում է ծանուցում նոր գործի առկայության վերաբերյալ էլ. փոստի հասցեով և տեղեկատվական համակարգում:

- Նոր գործն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մուտք է գործում Վինետ մոդուլ, ներբեռնում է էլեկտրոնային վինետը, ուսումնասիրում է դիմողի էլեկտրոնային գործում ներառված ամբողջ տեղեկատվությունը, բժշկական փաստաթղթերը, մշակում է վինետը առցանց, էլեկտրոնային.
- Ընտրում է անձի ֆունկցիոնալության գնահատման արձանագրության տեսակը,
- լրացնում է վճռորոշ ՖՄԴ ծածկագրերը, օգտվելով համակարգում առկա ծածկագրերի գնահատման ուղեցույցերից.
- լրացուցիչ փաստաթղթերի ցանկը.
- գնահատող մասնագետների մասնագիտացումը – ինչ մասնագետներից պետք է կազմված լինի հանձնաժողովը, մասնագետների թիվը (3-5 հոգի).
- ստուգում է լրացված վինետը և սեղմում է հաստատում հրահանգը:
- Տեղեկատվական համակարգն ավտոմատ դնում է հաստատման ամսաթիվը, վինետ մշակող մասնագետի անուն, ազգանուն, հայրանունը և կցում է վինետն անձի էլեկտրոնային գործին:

#### **ՄՄԾ համապատասխան ստորաբաժանումը՝**

- Համակարգում ավտոմատ ստանում է ծանուցում, որ վինետը մշակված է և սկսում է նախապատրաստել անձի ֆունկցիոնալության գնահատումը:

#### **ՄՄԾ համապատասխան ստորաբաժանումը (ՄՄԾ փորձաքննական բաժինը)՝**

- Վինետն ստանալուց հետո ուսումնասիրում է վինետը և նշանակում է անձի ֆունկցիոնալության գնահատման ամսաթիվը և ժամը
- Մասնագետների ռեեստրում որոնման նպատակով մուտքագրում է վինետում նշված մասնագետների մասնագիտացումները, գնահատման ամսաթիվը, ժամը, վայրը և անձի էլեկտրոնային գործի համարը

Տեղեկատվական համակարգը պատահականության սկզբունքով, ինքնաշխատ ընտրում է նշված մասնագիտացումով մասնագետներին (ըստ ՀՄԴ կողերի), կցում է նրանց գնահատվող անձի էլեկտրոնային գործը, առանց անձի անձնական տվյալների և ավտոմատ ծանուցում է գնահատման ամսաթիվը, ժամը և վայրը:

Ֆունկցիոնալ գնահատում

Դիմողը ներկայանում է գնահատման, եթե կարող է տեղաշարժվել:

Եթե դիմողը, ելնելով իր առողջական վիճակից, չի կարող ներկայանալ գնահատման վայր և այդ մասին նշած է դիմումում և բժշկական փաստաթղթերում, ապա գնահատող հանձնաժողովը ֆունկցիոնալության գնահատումն իրականացնում է գնահատվող անձի գտնվելու վայր այց կատարելով (հիվանդանոց, տուն և այլն):

#### **Գնահատման գործընթացը**

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում են անձի էլեկտրոնային գործը՝ ինքնագնահատման թերթիկը, բժշկական փաստաթղթերը, հետազոտությունների արդյունքները և վինետը: Կատարում են ֆունկցիոնալության գնահատում:

:

Հանձնաժողովի անդամները էլեկտրոնային անձի ֆունկցիոնալության գնահատման լրացված վինետի հիման վար ավտոմատ ձևավորված արձանագրության մեջ համաձայնության գալով, մուտքագրում են ծածկագրերի որակիչները, օգտվելով համակարգում առկա ծածկագրերի գնահատման համապատասխան ուղեցույցերից:

Անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը հաշվարկվում է ինքնաշխատ՝ E-Disability տեղեկատվական համակարգի կողմից՝ գնահատման ալգորիթմի միջոցով, երբ գնահատող հանձնաժողովի անդամները մուտքագրում են որակիչները: Ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության կամ քրոնիկ հիվանդության տեսակի, արձանագրություններում առանձնացված են վճռորոշ ծածկագրեր, որոնց համար գնահատված որակիչները հիմք են հանդիսանում անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի որոշման համար:

Համակարգն ավտոմատ դուրս է բերում այն վճռորոշ ծածկագրերը, որոնք սահմանված են տվյալ հաշմանդամության տեսակի կամ քրոնիկ հիվանդության համար՝ հաշվի առնելով տարիքային խմբերը: Ալգորիթմի բանաձևում ներառվում են միայն մարմնի կառուցվածքի և օրգանիզմի ֆունկցիաների b/s ծածկագրերը և մասնակցության ու գործունեության d ծածկագրերը: Միջավայրային գործոնների e ծածկագրերն ալգորիթմի բանաձևի մեջ չեն ներառվում:

Անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը հաշվարկվում է ինքնաշխատ՝ E-Disability տեղեկատվական համակարգի կողմից՝ գնահատման ալգորիթմի միջոցով, երբ գնահատող հանձնաժողովի անդամները մուտքագրում են որակիչները: Ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության կամ քրոնիկ հիվանդության տեսակի, արձանագրություններում առանձնացված են վճռորոշ ծածկագրեր, որոնց համար գնահատված որակիչները հիմք են հանդիսանում անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի որոշման համար:

Համակարգն ավտոմատ դուրս է բերում այն վճռորոշ ծածկագրերը, որոնք սահմանված են տվյալ հաշմանդամության տեսակի կամ քրոնիկ հիվանդության համար՝ հաշվի առնելով տարիքային խմբերը: Ալգորիթմի բանաձևում ներառվում են միայն մարմնի կառուցվածքի և օրգանիզմի ֆունկցիաների s/b ծածկագրերը և մասնակցության ու գործունեության d ծածկագրերը: Միջավայրային գործոնների e ծածկագրերն ալգորիթմի բանաձևի մեջ չեն ներառվում:

Առաջարկվող ալգորիթմով հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը որոշելու համար առանձնացված են հետևյալ թվով վճռորոշ ծածկագրերը, ըստ գնահատման ֆոկուս արձանագրությունների.

Արձանագրություն Վճռորոշ b, s և d ծածկագրերի ընդհանուր թիվը Առավելագույն որակիչը

Առավելագույն միավորը				
Հենաշարժական	25	×4	100	
Տեսողության	15	×4	60	
Լսողական/խոսքի, ձայնի	15	×4	60	
Մտավոր/հոգեկան	25	×4	100	
Քրոնիկ հիվանդություններ				
- Սրտանոթային	20	×4	80	
- Հեմատոլոգիական	15	×4	60	
- Իմունոլոգիական	15	×4	60	
- Միզա-սեռային համակարգի	15	×4	60	
- Նյութափոխանակություն, էնդոկրին	15	×4	60	

Վճռորոշ ծածկագրերի որակիչների հանրագումարը բաժանվում է առավելագույն միավորի վրա և ստացված արդյունքը՝ հարաբերակցությունը ցույց է տալիս միավորը 0-1 միջակայքում: (Ընդհանուր միավոր)/(Առավելագույն միավոր) = Հարաբերական միավոր (0-1)

Հաշվարկի արդյունքում համակարգը գեներացնում է գնահատման որոշումը՝ գնահատված ծածկագրերով, որակիչներով և անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանով (**Հավելված 2**):

Սոցիալական աշխատողը տպում է գնահատող հանձնաժողովի որոշումը, որը ներառում է անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ ծածկագրերով և որակիչներով, տրամադրում է անձին առձեռն, ուղարկում է փոստով կամ առցանց:

### **Անձի ֆունկցիոնալության գնահատման և հաշմանդամություն ունեցող անձ (երեխա) ճանաչելու շեմերը**

Եթե անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը ցածր է 0.04 միավորից կամ 4%-ից, ապա անձը չի ճանաչվում հաշմանդամություն ունեցող, քանի որ նա չունի ֆունկցիոնալության որևէ սահմանափակում կամ խնդիր իր առօրյա կյանքում:

Եթե անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը 0.05-0.24 միջակայքում է կամ 5-24%, ապա անձը ճանաչվում է որպես հաշմանդամություն ունեցող, սահմանվում է ֆունկցիոնալության թեթև աստիճանի սահմանափակում, նրա համար մշակվում է ծառայությունների անհատական ծրագիր և ըստ կարիքի երաշխավորվում են ծառայություններ:

Եթե անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը 0.25-0.50 միջակայքում է է կամ 25-50%, ապա անձը ճանաչվում է որպես հաշմանդամություն ունեցող, սահմանվում է ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում, նրա համար մշակվում է ծառայությունների անհատական ծրագիր, և ըստ կարիքի երաշխավորվում են ծառայություններ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն:

Եթե անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը 0.51-0.75 միջակայքում է 51-75%, ապա անձը ճանաչվում է որպես հաշմանդամություն ունեցող անձ, սահմանվում է ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում, նրա համար մշակվում է ծառայությունների անհատական ծրագիր և ըստ կարիքի երաշխավորվում են ծառայություններ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն:

Եթե անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը 0.76-100 միջակայքում է կամ 76-100%, ապա անձը ճանաչվում է որպես հաշմանդամություն ունեցող անձ, սահմանվում է ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում, նրա համար մշակվում է ծառայությունների անհատական ծրագիր և և ըստ կարիքի երաշխավորվում են ծառայություններ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն:

### 1.1 Օգտվողների կառավարման համակարգի կառուցվածքը

e-disability համակարգում օգտվողներ գրանցելու և նրանց դերեր տրամադրելու ֆունկցիոնալությունը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ Օգտվողների կառավարման ճկուն համակարգ: Օգտվողների կառավարման համակարգով պետք է հնարավոր լինի

1. Գրանցել օգտվողներ
2. Տրամադրել լիազորություններ
3. Կառավարել օգտվողների կարգավիճակը
4. Կառավարել օգտվողներին տրամադրած դերերի կարգավիճակը

Օգտվողների կառավարման համակարգը պետք է բաժանված լինի երկու ենթահամակարգի (Անվանումները պայմանական են)

1. **ՄՄԾ աշխատակիցներ**
2. **Վիճետ**


**ՄՄԾ աշխատակիցներ** ենթաբաժնում պետք է հնարավոր լինի գրանցել այն օգտվողներին, ովքեր պետք է հանդես գան, որպես ՄՄԾ աշխատակից և կարողանան գործողություններ կատարել որպես օպերատոր

**Վիճետ** ենթաբաժնում պետք է հնարավոր լինի գրանցել ընտրված մասնագետ/փորձագետներին, ովքեր պետք է կարողանան գործողություններ կատարել որպես վիճետ լրացնող մասնագետ կամ փորձագետ:

Երկու ենթաբաժինների համար պետք է նախատեսել հետևյալ ինտերֆեյսերը

1. **Գլխավոր էջի ինտերֆեյս**, որտեղ պետք է ցուցադրվեն յուրաքանչյուր ենթաբաժնում գրանցված օգտվողների տվյալները
2. **Գրանցման էջի ինտերֆեյս**, որտեղ պետք է ցուցադրվեն գրանցման համար անհրաժեշտ դաշտերը և հրահանգները
3. **Խմբագրման էջի ինտերֆեյս**, որտեղ պետք է ցուցադրվեն գրանցված օգտվողի տվյալները նույնությամբ ինչ ցուցադրվում է Գրանցման ինտերֆեյսում՝ որոշ դաշտերի խմբագրման հնարավորությամբ

1.2 Գործընթացների նկարագրություն



2. Դերերի կառավարում

2.1 Դերեր


e-disability համակարգի համար պետք է առանձնացված լինեն հետևյալ հիմնական դերերը

1. Ազմինիստրատոր
2. Օպերատոր

### 3. Մասնագետ

- a. Վիճետ լրացնող բժիշկ
- b. օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ
- c. անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ

Համակարգում գրանցված օգտատերերի դերերի գծապատկերը ներկայացված է ստորև.




Այս բոլոր դերերը պետք է ունենան իրենց հասանելի ինտերֆեյս՝ համապատասխան տվյալներով և ֆունկցիոնալությամբ, որոնք պետք է սահմանվեն դերի հատկանիշերով (Attribute)

#### 2.1.1 ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ

Ադմինիստրատորը իր ինտերֆեյսում պետք է հասանելիություն ունենա


1. Օգտվողների կառավարման համակարգի Օգտվողների գրանցման ենթահամակարգերին՝ Վիճետ և ՄՍԾ աշխատակիցներ
2. Տեղեկատու աղյուսակների կառավարման համակարգին
3. Ծանուցումների կառավարման համակարգին



### 2.1.2 ՕՊԵՐԱՏՈՐ

Օպերատորը իր ինտերֆեյսում պետք է հասանելիություն ունենա

1. Դիմումներ ենթաբաժնին, որտեղ պետք է ցուցադրվեն Դիմումների միասնական համակարգից e-disability համակարգին ուղարկված դիմումները



### 2.1.3 ՄԱՍՆԱԳԵՏ

Մասնագետ դերը բաժանվում է 3 տեսակի դերի, որոնք օգտատիրոջը տրամադրվում են ատրիբուտների միջոցով: Դերերը հետևյալն են

1. Վինետ լրացնող բժիշկ
2. օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ
3. անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ

Այս դեպքի համար ատրիբուտ է հանդիսանում Գործունեության տեսակ դաշտի արժեքները:


### 2.1.3.1 Վիճակ մշակող բժիշկ

Վիճակ մշակող բժիշկը պետք է հասանելիություն ունենա

1. Անձնական տվյալների ենթաբաժինը
2. Դիմումներ ենթաբաժին
3. Վիճակ ենթաբաժին

Դիմումներ ենթաբաժնում վիճակ մշակող բժիշկ դեր ունեցող օգտվողին պետք է հասանելի լինեն միայն այն դիմումները, որոնց համար որպես Վիճակ մշակող բժիշկ Համակարգը պատահականության սկզբունքով ընտրել է տվյալ օգտվողին: Մնացած Դիմումները չպետք է հասանելի լինեն օգտվողին:

Դիմումը ընտրված օգտվողին պետք է հասանելի լինի սահմանափակումներով. Անձի անձնական տվյալները չպետք է տեսանելի լինեն Վիճակ մշակող բժիշկին:



### 2.1.3.2 Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ

Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ դերին պետք է հասանելի լինի


1. Անձնական տվյալների ենթաբաժինը
2. Դիմումներ ենթաբաժինը
3. Գնահատման գործընթացը ապահովող ֆունկցիոնալությունը

Անձնական տվյալների ենթաբաժնում օգտվողին պետք է հասանելի լինեն գրանցման ժամանակ լրացված բոլոր տվյալները: Տվյալները պետք է լինեն չխմբագրվող, բացի Սպասարկման տարածքները և Հասանելիությունը - Օրացույց դաշտերից: Նշված դաշտերը օգտվողը պետք է

հնարավորություն ունենա խմբագրելու՝ սահմանելով աշխատանքային և ոչ աշխատանքային օրերը և ժամերը և սպասարկման տարածքները:

Դիմումներ ենթաբաժնում օգտվողին պետք է հասանելի լինեն միայն այն դիմումները, որոնց համար որպես Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ Համակարգը պատահականության սկզբունքով ընտրել է տվյալ օգտվողին: Մնացած Դիմումները չպետք է հասանելի լինեն օգտվողին: Դիմումը ընտրված օգտվողին պետք է հասանելի լինի սահմանափակումներով: Անձի անձնական տվյալները չպետք է տեսանելի լինեն Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող բժիշկ դերին: Օգտվողին պետք է հասանելի լինի նաև արդեն մշակված ամփոփագիրը՝ առանց խմբագրելու հնարավորության:

Գնահատման գործընթացը ապահովող ֆունկցիոնալության վերաբերյալ տվյալները կտրամադրվեն ԱՍՀՆ համապատասխան մասնագետների հետ հստակեցնելուց հետո:



### 2.1.3.3 Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ


Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ դերին պետք է հասանելի լինի

1. Անձնական տվյալների ենթաբաժինը
2. Դիմումներ ենթաբաժինը
3. Գնահատման գործընթացը ապահովող ֆունկցիոնալությունը

Անձնական տվյալների ենթաբաժնում օգտվողին պետք է հասանելի լինեն գրանցման ժամանակ լրացված բոլոր տվյալները: Տվյալները պետք է լինեն չխմբագրվող, բացի Սպասարկման տարածքները և Հասանելիությունը - Օրացույց դաշտերից: Նշված դաշտերը օգտվողը պետք է հնարավորություն ունենա խմբագրելու՝ սահմանելով աշխատանքային և ոչ աշխատանքային օրերը և ժամերը և սպասարկման տարածքները:

Դիմումներ ենթարաժնում օգտվողին պետք է հասանելի լինեն միայն այն դիմումները, որոնց համար որպես Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ Համակարգը պատահականության սկզբունքով ընտրել է տվյալ օգտվողին: Մնացած Դիմումները չպետք է հասանելի լինեն օգտվողին: Դիմումը ընտրված օգտվողին պետք է հասանելի լինի սահմանափակումներով: Անձի անձնական տվյալները չպետք է տեսանելի լինեն անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետ դերին: Օգտվողին պետք է հասանելի լինի նաև արդեն մշակված ամփոփագիրը՝ առանց խմբագրելու հնարավորության:

Գնահատման գործընթացը ապահովող ֆունկցիոնալության վերաբերյալ տվյալները կտրամադրվեն ԱԱՀՆ համապատասխան մասնագետների հետ հստակեցնելուց հետո:




Օգտվողների կառավարման համակարգի միջոցով կառավարվում է Համակարգում օգտվողների գրանցման , լիազորությունների տրամադրման, համակարգում առկա տվյալների կառավարման գործընթացները: Օգտվողների կառավարման համակարգին հասանելիություն ունի Ադմինիստրատոր դեր ունեցող օգտատերը, ով պետք է համակարգ մուտք գործի իրեն տրամադրված մուտքային տվյալներով:

Օգտվողների կառավարման համակարգը հնարա հնարավոր

1. Գրանցել օգտվողներ
2. Տրամադրել լիազորություններ
3. Կառավարել օգտվողների կարգավիճակը
4. Կառավարել օգտվողներին տրամադրած դերերի կարգավիճակը
5. Կառավարել Տեղեկատու աղյուսակները

3.1.1 Օգտվողների գրանցման բիզնես գործընթաց

Ստորև ներկայացված է ադմինիստրատորի դեր ունեցող օգտվողի կողմից համակարգում օգտատերեր գրանցելու գործընթացի նկարագրությունը գծապատկերի տեսքով




3.1.2 Օգտվողների գրանցման բիզնես գործընթացի նկարագրություն

1. Ադմինիստրատորի դեր ունեցող օգտվողը մուտք է գործում իր օգտահաշիվ(հարթակ) և ընտրում է այն օգտվողի տեսակը, որին ցանկանում է գրանցել համակարգում որպես օգտվող
2. Մուտքագրում է տվյալ անձի ՀԾԸ-ն համապատասխան ձևաչափով
3. Համակարգը լրացված ՀԾԸ-ով հարցում է կատարում ԲՊՌ տվյալների շտեմարանին՝ անձին նույնականացնելու համար
4. Տվյալ ՀԾԸ-ով ֆիզիկական անձ գտնվել է՝ եթե այո ապա անցում է կատարվում կետ 6-ին, եթե ոչ հաջորդ կետին
5. Ցրամադրում է հաղորդագրություն անձի մասին տվյալների բացակայության վերբերյալ, որից հետո կրկին անցում է կատարվում կետ 2-ին
6. Ցրամադրում է անձի վերբերյալ գտնված տվյալները
7. Ստացված անձնական տվյալները համակարգը ինքնաշխատ լրացնում է համապատասխան դաշտերում
8. Ադմինիստրատորը լրացնում պահանջվող մնացած դաշտերը

9. Կետ 1-ում ընտրված օգտվողի տեսակից կախված տրամադրում է անհրաժեշտ լիազորությունները և Պահպանում լրացված տվյալները, սեղմելով համանուն հրահանգը
10. Տվյալները պահպանվում են համակարգում, իսկ լրացված էլ. փոստի հասցեն գեներացվում է որպես ծածկանուն / մուտքանուն
11. Նշված էլ փոստի հասցեով ուղարկվում է հաղորդագրություն հաստատման հղումով
12. Գրանցվող օգտատերը անցում է կատարում էլ փոստին ստացած հղումով, որի արդյունքում ցուցադրվում է ծածկագիր սահմանելու համար նախատեսված ինտերֆեյսը: Լրացնում է ծածկագիրը և պահպանում այն, սեղմելով համանուն հրահանգը
13. Օգտատերը համակարգում գրանցվել է որխես Բժիշկ / Հարբժիշկ, եթե ոչ ապա անցում է կատարվում կետ 16-ին, եթե այո ցուցադրվում է մեկ այլ ինտերֆեյս Մասնագիտական տվյալներ մուտքագրելու համար և անցում է կատարվում հաջորդ կետին
14. կետ 13-ում նկարագրված նոր ինտերֆեյսում լրացնում է մասնագիտության վերաբերյալ անհրաժեշտ տվյալները և ընտրում է այն ՄՍԾ կենտրոնները, որոնց անունից կարող է հանդես գալ օգտատերը
15. Մուտք է գործում տվյալ օգտվողի հիմնական էջը, որով օգտվողի գրանցման գործընթացը ավարվում է

### 3.1.3 Դերեր և լիազորություններ

Համակարգում նախատեսված է հետևյալ դերերի կառավարման մոդուլը.



### 3.2 Ադմինիստրատոր դեր ունեցող օգտվողի ինտերֆեյսային նկարագրություն

Ադմինիստրատորի դեր ունեցող օգտվողի համար նախատեսված է հետևյալ ենթաբաժինները.


1. Վինետ մշակող բժիշկ
2. Բժիշկ/Հարբժիշկ

### 3. Օպերատորներ

Բաժիններից յուրաքանչյուրի վրա սեղմելու արդյունքում բացվում են համապատասխան օգտվողներ գրանցելու ինտերֆեյսերը, որտեղ ցուցադրվում են տվյալ բաժնին համապատասխան բոլոր գրանցված օգտվողների տվյալները: (Նկար 1)

Ինտերֆեյսից հնարավոր է.

1. Ավելացնել նոր օգտվող
2. Դիտել գրանցված օգտվողների տվյալները
3. Կառավարել գրանցված օգտվողների կարգավիճակները



Նկար 1

«Ավելացնել» կոճակի միջոցով հնարավոր է ավելացնել նոր օգտատեր: Հրահանգը սեղմելու արդյունքում անցում է կատարվում Օգտվողի գրանցման ինտերֆեյս, որտեղ լրացվում են գրանցվող անձի տվյալները: (Նկար 2)



**Մուտք գործել e-Disability համակարգ**

Էլ. հասցե

Գաղտնաբերում

Մուտք գործել

Մուտք

### Նկար 3

Առաջին անգամ համակարգ մուտք լինելու դեպքում Համակարգը ցուցադրում է.

1. ծածկագիրը փոխելու հաղորդագրություն, որտեղից օգտվողը նշում է նոր ծածկագիր (Նկար 4)
2. անձնական տվյալներ բաժինը, որտեղ օգտվողը պետք է լրացնի անձնական տվյալներ (Նկար 5)

**Մուտքագրել թ. հոր e-Disability հաշիվ էլ. հասցե**

Դասակարգել էլ. հասցեն լրացանքի գաղտնաբաժնի փոփոխման համար անհրաժեշտ էլ. հասցե:

Էլ. հասցե

Բացարձակ

### Նկար 4

Տվյալների ամբողջականության համար խնդրում ենք լրացնել ստորև դաշտերը:

Ցարիցային իրավիճակ

Մինչև 18 տարեկան անձանց համար  
18 տարեկանից բարձր անձանց համար

Մասնագիտություններ

Մանկաբույժ  
Մանկական սրբույնիկ վնասվածքաբան  
Մանկական անկարգիչ  
Մանկական սրտաբան

ՄՍԾ կենտրոններ

ՄՍԾ 1   
ՄՍԾ 2   
ՄՍԾ 3   
ՄՍԾ 4


Պահպանել

Նկար 5

Պահպանելուց հետո լրացված տվյալները ավելանում են օգտվողի անձնական տվյալներին:

### 3.3 Անձի ֆունկցիոնալության գնահատում

#### 3.3.1 Անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացի գծապատկեր



### 3.3.2 Անձի ֆունկցիոնալության գործընթացի նկարագրություն

1. Դիմումների միասնական համակարգում դիմումատուն ներկայացնում է դիմում անձի ֆունկցիոնալության գնահատման համար, որը ստացվում է e-disability համակարգում և համակարգի կողմից պատահականության սկզբունքով ուղարկվում է վինետ մշակող մասնագետին:
2. Վինետ մշակող մասնագետը ստանում է դիմումի վերաբերյալ ծանուցումը, որը ընդունում է կամ մերժում: Եթե մերժում է դիմումը, ապա Համակարգը նորից է կատարում պատահականության սկզբունքով ընտելություն և դիմումը ուղարկում է հաջորդ վինետ մշակող մասնագետին (Կետ 1): Իսկ եթե ընդունում է դիմումը, ապա անցնում է կետ 3-ին:
3. Վինետ մշակող մասնագետը ուսումնասիրում է դիմումի տվյալները և ստեղծում է ամփոփաթերթ, որտեղ նշում է անհրաժեշտ արձանագրությունը:
4. Այնուհետև լրացնում է ՖՄԴ ծածկագրերի ցանկը, որը համակարգը ցուցադրում է կախված արձանագրության տեսակից: Ցանկում ինքնաշխատ նշվում են վճռորոշ և ոչ վճռորոշ ծածկագրերը, որոնք վինետ մշակող մասնագետը կարող է խմբագրել՝ վճռորոշը դարձնելով ոչ վճռորոշ և հակառակը:
5. Վինետ մշակող մասնագետը նշում է գնահատման վայրը: Այն կարող է լինել դիմումատուի կողմից նշված վայրը, կամ փոխվել վինետ մշակող մասնագետի կողմից: Վինետ մշակող մասնագետը սահմանում է նաև հանձնաժողովի կազմը՝ նշելով բժիշկների և հարբժիշկների մասնագիտությունները՝ առավելագույնը 5 անդամ (2 բժիշկ, 3 հարբժիշկ)
6. Տվյալները լրացնելուց հետո վինետ մշակող մասնագետը հաստատում է ամփոփագիրը:
7. Համակարգը գեներացնում է գնահատման օր և ժամ
8. Համակարգը ըստ նշված տվյալների պատահականության սկզբունքով ընտրում է բժիշկներ և հարբժիշկներ :
9. Համակարգը ընտրված օգտվողներին ծանուցում է ուղարկում գնահատման օրվա ժամի և վայրի վերաբերյալ:
10. Եթե բժիշկը և հարբժիշկը մերժում են գնահատմանը իրենց մասնակցությունը, ապա համակարգը կրկին պատահականության սկզբունքով ընտրում է այլ օգտվողների, այնքան ժամանակ մինչև կազմը լրանում է (Կետ 8): Եթե հաստատում են մասնակցությունը, ապա անցնում է կետ 11:
11. Համակարգը ծանուցում է ուղարկում դիմումատուին գնահատման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ:
12. Գնահատման օրը հանձնաժողովը իր ինտերֆեյսում գնահատում է անձի ֆունկցիոնալությունը և հաստատում է:
13. Համակարգը բանաձևի միջոցով հաշվարկում է անձի ֆունկցիոնալության սահմանը:
14. Համակարգը արձանագրության մեջ լրացված տվյալների և բանաձևով հաշվարկի հիման վրա ձևավորում է որոշում:
15. Համակարգը ծանուցում է ուղարկում դիմումատուին որոշման վերաբերյալ:


### 3.4 Ադմինիստրատոր դեր ունեցող օգտավորի ինտերֆեյսային նկարագրություն

Համակարգում յուրաքանչյուր օգտվողի համար առանձնացված է դերի լիազորություններին համապատասխան դեշբորդ՝ համապատասխան տեսանելիությամբ:

### 3.4.1 Վիճակի մշակող մասնագետի ինտերֆեյս


Համակարգ մուտք լինելուց հետո վիճակ մշակող մասնագետի իր ինտերֆեյսում ցուցադրվում են հետևյալ բաժինները。(Նկար 1)

1. «Իմ էջը» բաժինը, որի վրա սեղմելու արդյունքում թափվող ցանկով ցուցադրվում են հետևյալ ենթաբաժինները.
  - a. **Անձնական տվյալներ**, որտեղ ցուցադրվում են տվյալ օգտվողի անձնական տվյալները, ինչպես նաև այն տվյալները, որոնք լրացվում են օգտվողին գրանցելիս:
  - b. **Կարգավորումներ**
  - c. **Ելք**, որի վրա սեղմելու արդյունքում օգտվողը դուրս է գալիս համակարգից:
2. **Դիմումներ**, որտեղ ցուցադրվում են տվյալ օգտվողին հասանելի դիմումները
3. **Հաստատված ամփոփագրեր**, որտեղ ցուցադրվում են տվյալ օգտվողի կողմից ստեղծված և հաստատված ամփոփագրերը



Նկար 1


**Դիմումներ** բաժնի վրա սեղմելու արդյունքում թափվող ցանկի տեսքով բացվում են տվյալ օգտվողին հասանելի դիմումները: Նոր ստացված դիմումները (որոնք դեռևս չեն դիտվել) ցուցադրվեն մուգ տառերով, իսկ այն դիմումները, որոնք արդեն դիտվել են, ցուցադրվում են ոչ մուգ տառերով: (Նկար 2)



Նկար 2


Անհրաժեշտ դիմումի վրա սեղմելու արդյունքում բացվում են տվյալ դիմումի տվյալները, որոնք տարանջատված են հետևյալ բաժիններում (Նկար 3)

1. Դիմում, որտեղ ցուցադրվում են դիմումնատուի կողմից ներկայացված դիմումի տվյալները (Նկար 3)




Նկար 3

2. Տվյալներ, որտեղ ցուցադրվում են տվյալ անձի վերաբերյալ ՏՀ-ներից հավաքագրված տվյալները (Նկար 4)



Նկար 4

3. Փաստաթղթեր, որտեղ ցուցադրվում են դիմումատուի կողմից կցված փաստաթղթերը(Նկար 5)



Նկար 5

4. Ամփոփագիր, որտեղ ցուցադրվում է վիճետ մշակողի կողմից ստեղծված ամփոփագիրը (Նկար 6)



👤 📄 🏠

**ՀԱՌԱԿԵՆՈՒՄԱՐՔԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՈՐՈՒՄԱՐԻ** Դիմում №005144

---

Երկու կողմից կազմված
 Անդր
Տարիք

Երկու
1999
1999

---

**Վարչապետի անձնակազմի անունը\***
**Գրքի անձնակազմային Կազմակերպության Գրքի և Վարչապետի անունը**

Վարչապետ
Վարչապետ

---

**Վարչապետի անձնակազմի անունը**
**Վարչապետի անձնակազմի անունը և նրա անձնակազմի անունը**

Վարչապետ
Վարչապետ

---

**Վարչապետ**
**ՏՄՂ կազմը\***
**Վերջ**
**Վերջ**

Վարչապետ
Վարչապետ
Վարչապետ

---

**Վարչապետի անձնակազմի անունը**
**Վարչապետի անունը**

Վարչապետ
Վարչապետ

Վարչապետ 1
Վարչապետ 2
Վարչապետ 3
Վարչապետ 4
Վարչապետ 5

---

**Վարչապետի անունը\***
**Վարչապետի անունը**

Վարչապետ
Վարչապետ

Վարչապետի անունը
 Վարչապետ 1
Վարչապետ 2
Վարչապետ 3

---

**Վարչապետի անունը\***
**Վարչապետի անունը**

Վարչապետ
Վարչապետ

Վարչապետ 1
Վարչապետ 2
Վարչապետ 3


Նկար 6

### 3.5 Ամփոփագրի լրացման գործընթացի ֆունկցիոնալ և ինտերֆեյսային նկարագրություն

Վինետ մշակող մասնագետը ընտրված դիմումի ինտերֆեյսում սեղմում է Ստեղծել Ամփոփագիր հրահանգը, որի արդյունքում բացվում է ամփոփագիրը՝ խմբագրման ռեժիմով: (Տես նկար 6)

Ամփոփագրում անձի անձնական տվյալները չեն ցուցադրվում բացի սեռը և տարիքը տվյալներից:

Վինետ մշակող մասնագետը ուսումնասիրելով անձի տվյալները, ամփոփագրում Առաջարկվող Արձանագրության տեսակը դաշտից ընտրում է անհրաժեշտ արձանագրությունը: Այնուհետև սեղմում է Լրացնել կոճակը, որի արդյունքում բացվում է ընտրված արձանագրության ՖՄԴ ծածկագրերի ցանկը: (Նկար 7)




Նկար 7

1. Կոդ դաշտում չխմբագրվող ցուցադրվում է ՖՄԴ ծածկագիրը
2. Նկարագրություն դաշտում չխմբագրվող ցուցադրվում է ՖՄԴ ծածկագրի նկարագիրը
3. Վճռորոշ ընտրատուիքը նշված է այն ՖՄԴ ծածկագրերի համար, որոնք համարվում են վճռորոշ: Այն խմբագրելի է և հնարավոր է հանել նշումը՝ դարձնելով ոչ վճռորոշ
4. Ընտրել ընտրատուիքը նշելով ընտրվում է ծածկագիրը, որի արդյունքում այն ցուցադրվում է գեներացվող արձանագրության վրա:
5. Նշումներ դաշտում վինետ մասնագետը կատարում է իր կողմից նշումներ:

Այս բոլոր խմբագրելի դաշտերը պարտադիր են լրացման համար:

Անհրաժեշտ նշումները կատարելուց հետո վիճետ մշակող մասնագետն սեղմում է Հաստատել հրահանգը, որի արդյունքում փակվում է պատուհանը և անցում է կատարվում ամփոփագրի ինտերֆեյս:


Այն դեպքում, եթե անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ արձանագրության տեսակ ընտրելու, վիճետ մշակող մասնագետը սեղմում է կոճակը, որի արդյունքում բացվում է լրացուցիչ արձանագրության տեսակը լրացնելու համար անհրաժեշտ դաշտերը (Նկար 8)



Նկար 8

1. Լրացուցիչ արձանագրության տեսակ, որտեղից վիճետ մշակող մասնագետը ընտրում է անհրաժեշտ արժեքը
2. ՖՄԴ ծածկագիր, որտեղից ընտրվում է անհրաժեշտ ՖՄԴ ծածկագիրը
3. Վճռորոշ, ընտրատույի, որտեղ նշվում է ծածկագրի վճռորոշ լինելը
4. + կոճակ, որի միջոցով կարելի է ավելացնել նոր ՖՄԴ ծածկագիր
5. - կոճակ, որի միջոցով կարելի է ջնջել ավելացված ՖՄԴ ծածկագիրը
6. PDF ֆայլ, որտեղ ցուցադրվում են բոլոր ՖՄԴ ծածկագրերը իրենց նկարագրություններով

**Անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր** հատվածում վիճետ մշակող մասնագետը նշում է այն փաստաթղթերի անվանումները, որոնք անհրաժեշտ է ներկայացնել գնահատման ժամանակ դիմումատուի կողմից: Դաշտից արժեք ընտրելուց հետո փաստաթղթի անվանումը ցուցադրվում է աջ հատվածում, որտեղից հնարավոր է ջնջել ընտրված փաստաթուղթը: Միևնույն փաստաթուղթը հնարավոր չէ ընտրել 1-ից ավելի անգամ: (Նկար 9)




Նկար 9

**Գնահատման վայրը** հատվածում ցուցադրվում է այն արժեքը, որը նշում է դիմումատուն: Սակայն այն դեպքում, երբ վիճետ մշակող մասնագետը գնահատման վայրը նշում է իր կողմից նախընտրած հասցեում, ապա համակարգը առաջնահերթությունը տալիս է այդ նշմանը: (Նկար 10)

## Նկար 10

**Գնահատում իրականացնող մասնագետներ** հատվածում վիճետ մշակող մասնագետը նշում է հանձնաժողովի կազմի բժիշկների մասնագիտությունները՝ բժիշկ և հարբժիշկ: Ընտրված արժեքները ցուցադրվում են աջ հատվածում, որտեղից կարելի է ջնջել ընտրված արժեքը: Հնարավոր է ընտրել առավելագույնը 2 բժիշկ և 3 հարբժիշկ: (Նկար 11)



## Նկար 11

Տվյալները լրացնելուց հետո վիճետ մշակող մասնագետը սեղմում է **Հաստատել** հրահանգը, որի արդյունքում

1. Հաստատված ամփոփագրեր ենթաբաժնում ավելանում է տվյալ ամփոփագիրը
2. Դիմումներ բաժնում տվյալ դիմումը չի ցուցադրվում
3. Համակարգի կողմից գեներացվում է գնահատման օր և ժամ
4. Պատահականության սկզբունքով ընտրվում են օգտվողներ
5. Ծանուցում է ուղարկվում այդ օգտվողներին գնահատման օրվա վերաբերյալ

### 7.6. Տեխնիկական սպասարկում և համակարգի մոնիթորինգ

Այս աշխատանքները կիրականացվեն ՀՀ ԱՍՀՆ հետ կնքվող ամենամյա պայմանագրի շրջանակներում:

### 7.7. Ծրագրային ապահովման նախագծման մասնագրեր

ՏՀ-ի մշակման համար օգտագործվող ծրագրավորման լեզուները պետք է լինեն ընդունված, լայնորեն կիրառվող, քաջածանոթ, որոնք միկրոսերվիսների կառուցվածքի տեսանկյունից հարմար են, այդպիսիք են C# (.Net շրջանակ, վերջին երկարաժամկետ աջակցություն - LTS), JAVA (LTS), Python (3.9 և ավելի նոր), իսկ սկրիպտային լեզվի համար՝ առաջադեմ JavaScript տարբերակ (օրինակ՝ React.js):

Լուծման մեջ օգտագործվող տեխնոլոգիաների նախապատվությունը կտրվի բաց կոդով տարբերակներին, որոնք կապահովեն փակ կոդով տեխնոլոգիաներին համադրելի կատարողականություն և անվտանգություն: Օգտագործման ենթակա տեխնոլոգիաները ոչ մի դեպքում չպետք է ենթարկվեն որևէ տեսակի վճարների, ներառյալ, բայց չսահմանափակվելով լիցենզավորման, տարեկան սպասարկման, համակարգի աջակցության, թարմացումների և այլնի հետ կապված վճարներ:

## **7.8. Ինտեգրման և փոխգործելիության մասնագրեր**

### **7.8.1. Կառավարության փոխգործելիության հարթակ**

ԿՓՀ-ը տվյալների կենտրոնացված տվյալների պահոց է, որը հնարավորություն է տալիս տվյալների փոխանակում իրականացնել տարբեր պետական շտեմարանների միջև, ինչը կծառայի որպես տվյալների հավաքման կետ ՏՀ-ի համար: ՏՀ-ի կողմից տվյալների ստացման համար կօգտագործվեն ԿՓՀ-ի API-ները: ԿՓՀ-ի համար մատչելի API-ները հիմնված են HTTP հարցումների վրա:

Համակարգի ընդհանուր կառուցվածքը և ներդրումը պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության փոխգործելիության պահանջներին: Սա պահանջվում է ԿՓՀ-ի հետ համակարգի համատեղելիությունն ապահովելու համար:

ԿՓՀ-ի հետ փոխկապակցումը տեղի կունենա հարթակի կողմից տրամադրվող առկա API-ների միջոցով, սակայն Ծառայություն մատուցող կազմակերպությունից կպահանջվի գնահատել առկա հարթակի աշխատանքը և համոզվել, որ պոտենցիալ տեխնիկական սահմանափակումները լուրջ ազդեցություն չունենան ՏՀ-ի աշխատանքի վրա, իսկ եթե ունենան (պատշաճ կերպով բացահայտված և հիմնավորված), ապա պետք է դիտարկվի նշված ռեգիստրների հետ ուղղակի փոխկապակցման հնարավորությունը:

### **7.8.2. Առկա ներքին հարթակներ**

ՏՀ-ի հետ ինտեգրվող բոլոր ներքին հավելվածները կտրամադրեն RESTful API-ներ, իսկ վերադարձվող արժեքները կլինեն JSON ձևաչափով: Նշված հարթակների հետ ինտեգրումը հնարավորություն կտա ՏՀ-ին անհրաժեշտության դեպքում տվյալներ ստանալ այդ շտեմարաններից:

Տվյալների կառուցվածքի և տեսակների վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ կտրամադրվեն Ծառայություն մատուցող կազմակերպությանը վերջնական պայմանագրի կնքումից առաջ:

### **7.8.3. Արտաքին շտեմարաններ, որոնք ԿՓՀ-ի մաս չեն կազմում (ուղիղ կապակցում)**

ՀՀ ԱՍՀՆ աջակցությամբ Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից իրականացվելիք տվյալների աղբյուրների և ԿՓՀ ծառայության որակի վերաբերյալ պարզաբանումներից հետո, կորոշվեն տվյալների ուղղակի փոխանակում պահանջող բոլոր արտաքին աղբյուրները: Այնուհետև Ծառայություն մատուցող կազմակերպությունից կպահանջվի մշակել տվյալների շտեմարանի միակցիչներ, որոնք այդ ռեգիստրներին ինտեգրվելու հնարավորություն կտան: Միակցիչ մոդուլները կմշակվեն կանխորոշված և հեշտ հարմարեցվող փոխակերպման տրամաբանությամբ:

Նման մոդուլները պետք է մշակվեն այնպես, որ հնարավորություն ընձեռվի Հայաստանում թվային ծառայությունների լայնորեն կիրառվող տվյալների շտեմարանների տեխնոլոգիաների

միացման և համակարգերի փոխկապակցման համար: Արտաքին համակարգերից տվյալների փոխակերպումը պետք է լինի հեշտ կառավարելի, սպասարկելի և կարգավորելի ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից:

Տվյալների արտաքին աղբյուրները, որոնք չեն տրամադրում տվյալների փոխանակման API-ներ, կհամագործակցեն ՀՀ ԱՍՀՆ-ի հետ՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան լուծումներ մշակելու համար: Ծառայություն մատուցող կազմակերպությունը չի կրի տվյալների աղբյուրի սեփականատիրոջ կողմից կատարվող աշխատանքների հետ կապված որևէ ծախս:

#### **7.8.4. Տվյալների որակ**

ՏՀ-ին որակյալ տվյալների հասանելիություն ապահովելու համար էական կլինի ցանկացած արտաքին կամ ներքին հարթակից հանված կամ ձեռքով ներմուծված տվյալների համար հաշվի առնել տվյալների որակի վավերացման ավտոմատացված մեխանիզմներ: Կիրառված վավերացման մեխանիզմները շարունակաբար կերաշխավորեն բարձր որակ բոլոր չափումների նկատմամբ (ճշգրտություն, ամբողջականություն, հետևողականություն, ակտուալություն, վավերականություն և եզակիություն):

ՀՀ ԱՍՀՆ-ն կաջակցի Ծառայություն մատուցող կազմակերպությանը՝ տվյալների շտեմարանների սպառիչ ցուցակի մշակման, տվյալների համապատասխան փոխակերպման և առկա տվյալների որակի գնահատման գործում:

#### **7.9. Տեղեկատվական անվտանգության պահանջներ**

**7.9.1. Համակարգի փոխգործակցության արձանագրություն.** HTTPS արձանագրությունը (TLS 1.3) պետք է գործածվի համակարգի և տեղեկատվական այլ միջավայրի հետ բոլոր հաղորդակցությունների և օգտվողների ցանկացած տեսակի փոխգործակցության համար:

**7.9.2. Նույնականացում.** Բազմագործոն նույնականացում պետք է իրականացվի և գործադրվի՝ օգտագործելով առնվազն մեկ գիտելիքի գործոն և մեկ լրացուցիչ գործոն

**7.9.3. Գաղտնաբառերի գաղտնագրում.** Գաղտնաբառերը պետք է պատշաճ ծածկագրվեն նախքան պահպանվելը տվյալների շտեմարանում:

**7.9.4. Թույլտվություն.** Համակարգը պետք է իրականացնի դերի վրա հիմնված մուտքի վերահսկում և արտոնությունների բաշխում:

**7.9.5. Տվյալների ամբողջականություն.** Համակարգը իրավունք չունի փոփոխել օգտվողների կողմից մուտքագրված տվյալները:**7.9.8. Տեղեկամատյաններ.** Համակարգը պետք է ապահովի գրանցման տարբեր մակարդակներ բոլոր հանգույցների և բաղադրիչների համար, որոնք պետք է պահվեն իրադարձությունների մատյանում կամ տվյալների շտեմարանում::

**7.9.6. Օգտվողի սեսիա.** Սեսիայի նվազագույն և առավելագույն տևողությունը պետք է սահմանվի վարկյաններով և փոփոխելի լինի:

**7.9.7. Հասանելիություն.** Համակարգը պետք է երաշխավորի տվյալների ամբողջական պահպանումը կանխորոշված:

**7.9.8. Համակարգի անվտանգությունը** պետք է կառուցվի մուտքի նույնականացման և գաղտնաբառերի համադրությամբ: Անվտանգությունը պետք է ապահովվի ենթակառուցվածքների և Օպերացիոն համակարգի մակարդակով (Մակարդակ 1), հավելվածի մուտքի մակարդակ (Մակարդակ 2) և մենյու/ծրագրի իրականացման մակարդակով (Մակարդակ 3), և դրանք կարող են սահմանվել օգտվողի կողմից,

**7.9.9. Համակարգը** պետք է կոշտ ուժով (brute force) հարձակումների դեմ պատշաճ միջոցներ ապահովի՝ արգելափակելով օգտվողի հաշիվը փոփոխման հնարավորությամբ չափորոշիչներով պայմանավորված ժամանակետում փոփոխման հնարավորությամբ չափորոշիչներով պայմանավորված անվավեր մուտքի փորձերից հետո,

**7.9.10. Ադմին օգտվողի մուտքի** 3 անհաջող փորձի դեպքում հարցումը ներկայացնող IP-ն կարգելափակվի, և գաղտնաբառի վերականգնման հայց կուղղվի վավերացված ադմինիստրատորին:

**7.9.11. Համակարգը** օգտվողներին հնարավորություն կտա փոխելու իրենց գաղտնաբառը:

**7.9.12. Համակարգը** գաղտնաբառի քաղաքականության կիրառման կանոններ կսահմանի, ներառյալ, բայց չսահմանափակվելով.

- Գաղտնաբառի երկարությամբ
- Պահանջվող ալֆա նիշ
- Նախկինում օգտագործված գաղտնաբառերի քանակը որոնք թույլատրելի չեն տվյալ պահին վերաօգտագործել

**7.9.13. Համակարգը** պետք է ունենա գործառույթ, որով համակարգի ադմինիստրատորը կկարողանա դադարեցնել ընտրված օգտվողի կապերը/սեսիաները՝ առանց համակարգի վրա բացասաբար ազդելու:

**7.9.14. Մուտքի վերահսկման** անվտանգության գործառույթը պետք է հնարավորություն տա համակարգի ադմինիստրատորին որոշակի ժամանակով կամ անորոշ ժամանակով կասեցնել գոյություն ունեցող օգտվողի մուտքի իրավունքները:

**7.9.15. Համակարգը** պետք է հնարավորություն ընձեռի ավտոմատ կերպով դադարեցնել օգտվողի սեսիան անգործունակության որոշակի ժամանակահատվածից հետո:

**7.9.16. Անվտանգ կապի (SSL)** ծածկագրման հիմքում HTTPS արձանագրություն/պրոտոկոլն է, որն իրականացվում է համակարգի համար: Բաց բանալիով ծածկագրման մեթոդներն օգտագործվում են որպես SSL ծածկագրման մաս:

**7.9.17. Որոշ դաշտեր** պարտադիր են, քանի որ որոշակի տեղեկատվություն պետք է գրանցվի տվյալների շտեմարանում: Եթե այս դաշտերը բոլորը լրացված չեն, համակարգը պետք է մերժի ձևը համապատասխան հաղորդագրությամբ: Նմանապես, տվյալների մուտքագրման ստուգումները կարգավորելի են համակարգի ներսում: Եթե տեղեկատվությունը սխալ է մուտքագրված (օրինակ՝ թվեր են մուտքագրվում այնտեղ, որտեղ պետք է միայն տառեր լինեն կամ ամսաթվերն անվավեր են), համակարգը պետք է ստեղծի օգտվողին ծանուցող հաղորդագրություն, և ձևը չի ընդունվի մինչև սխալը չուղղվի:

**7.9.18. ՏՀ-ի և ներքին կամ արտաքին տվյալների շտեմարանների** միջև ցանկացած թրաֆիկ պետք է իրականացվի ապահով ցանցի միջոցով՝ անվտանգության և տվյալների լայնամասշտաբ կոդավորմամբ:

**7.9.19. Օգտվողի մուտքը**, Ծածկագրի վրա հիմնված նույնականացումը պետք է իրականացվեն ըստ համապատասխան պահանջների:

## **7.10. ՏՀ նախատիպի պահանջներ**

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ցուցադրի ՏՀ-ի նախագծված գործունակությունների պարզեցված տարբերակը համակարգի աշխատանքի վերաբերյալ փոխըմբռնում ապահովելու համար: Համակարգի հիմնական գործունակությունների նախատիպը

կներկայացվի ՀՀ ԱՍՀՆ-ին, որը կհաստատվի վերջինիս կողմից (հավելյալ մանրամասների համար տես գլուխ 12):

#### **7.11. Տվյալների շտեմարանի նկարագրություն**

Այն կառուցվածքը, որի հիման վրա տվյալները հավաքվում են և պահվում, ունի կենսական նշանակություն վերոհիշյալ գործառույթների տրամադրմամբ ՏՀ-ին ապահովելու գործում՝ ծառայելով որպես ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության միակ աղբյուր, որի տվյալները հավաքագրված են իր տվյալների պահոցում: Տվյալների շտեմարանը կարող է օժանդակել ՏՀ-ի գործառույթներին (լինելով հեշտությամբ ծավալվող և ճկուն, ինչպես նաև ապահովելով տվյալների բարձր որակ (ճշգրտությունը, ամբողջականությունը, հետևողականությունը, ակտուալությունը վավերությունը և եզակիությունը) և անվտանգություն (չկիրառվող տվյալներ, տվյալներ շարժման մեջ, կիրառվող տվյալներ):

Տվյալները պետք է պահվեն այնպես, որ հնարավոր լինի իրականացնել մշտական, իրական ժամանակի մեջ թարմացում (ձեռքով կամ ավտոմատ կերպով փոխկապակցված ռեգիստրների միջոցով), առանց կորցնելու ամբողջական աուդիտի հետքը և կապերը համապատասխան միավորների (անհատներ, ընտանիքներ և տնային տնտեսություններ) հետ՝ առանց արտադրողականության վրա բացասական ազդեցության, քանի որ հավաքագրված տվյալները աճում են:

Շահագործման ընդհանուր արժեքը (total cost of ownership) նվազեցնելու նպատակով նախապատվությունը կտրվի բաց կողով տեխնոլոգիաներին, որոնք կապահովեն փակ կողով տեխնոլոգիաներին համադրելի կատարողականություն և անվտանգություն: Օգտագործման ենթակա տեխնոլոգիաները ոչ մի դեպքում չպետք է ենթարկվեն որևէ տեսակի վճարների, ներառյալ, բայց չսահմանափակվելով լիցենզավորման, տարեկան սպասարկման, համակարգի աջակցության, թարմացումների և այլնի հետ կապված վճարներ: Զգայուն տվյալները, ներառյալ անձը նույնականացնող տեղեկությունները պետք է պահվեն և ծածկագրվեն AES-256 կամ համարժեք ալգորիթմի միջոցով: Համակարգը պետք է ապահովի անձնական տվյալների պաշտպանությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառելի կանոններին և պահանջներին համապատասխան:

#### **Տվյալների պահպանում**

ՏՀ-ում հաշվառված/ստեղծված բոլոր տեղեկությունները պետք է պահվեն անորոշ ժամանակով՝ անհրաժեշտության դեպքում թույլ տալով տվյալների արխիվացում: Իրականացված լուծումները պետք է ապահովեն, որ տվյալների ծավալների ավելացումը չազդի ծրագրային ապահովման աշխատանքի վրա:

#### **7.12. Կարգավորող պահանջներ (իրավական դաշտ)**

- ՀՀ օրենքը ՀՕ-195-Ն 05.05.2021թ. Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին
- ՀՀ կառավարության 28.07.2022թ. N 1180-Ն որոշում
- ՀՀ կառավարության 28.07.2022թ. N 1177-Ն որոշում
- ՀՀ կառավարության 28.07.2022թ. N 1161-Ն որոշում
- ՀՀ ԱՍՀՆ 19.08.2022թ. N108-Ա/1 հրաման
- Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման մասին ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի 1849-Ն որոշում

- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի թիվ 1093-Ն որոշում
- Պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու, էլեկտրոնային թվային ստորագրության կիրառմամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունները կամ գործողություններն էլեկտրոնային ձևով ձեռք բերելիս շահագործվող էլեկտրոնային համակարգերի տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 1595-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 25.05.2017թ. N 572-Ն
- «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենք
- «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն, 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1318-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1527-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
- «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
- «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24 N-ի 1535-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

### 7.13. Համապատասխանություն միջազգային չափանիշներին և պրոտոկոլներին

Լայնորեն կիրառվող ստանդարտներին և համապատասխան ոլորտի փորձին համապատասխանությունը էական նշանակություն ունի տեխնիկական սպասարկելիության, ընդլայնման հնարավորության հետագա ապահովման համար՝

- Կողավորման հայտնի և լայնորեն կիրառվող չափանիշներին պետք է հետևել՝ կախված այն ծրագրավորման լեզվից, որը կօգտագործվի համակարգի մշակման համար: Կողավորման չափանիշներն առաջարկվում են Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից և հաստատվում ՀՀ ԱՍՀՆ կողմից:

### 7.14. Սարքավորման պահանջներ և մասնագրեր

Համակարգը պետք է կարողանա հնարավորինս արդյունավետ օգտագործել ապարատային ռեսուրսները՝ դրանով իսկ նվազեցնելով պահանջվող բարձրակարգ բաղադրիչների և կազմաձևումների ծախսը և անհրաժեշտությունը: Այն պետք է աշխատի վիրտուալացված միջավայրում (վիրտուալ մեքենաների միջոցով):

Ենթակառուցվածքը, որի վրա կներդրվի սերվերային (backend) մասը, պետք է կարողանա ապահովել մասնավոր ամպային տեխնոլոգիաների (private cloud) իրականացումը, անհրաժեշտության դեպքում հեշտությամբ ընդլայնվի: Անվտանգության բարձրացման և լիցենզավորման ծախսի նվազեցման նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել հարթակներ, որոնք հայտնի են անվտանգության ներկառուցված միջոցներով (օրինակ՝ Unix/Linux):

Ծառայություն մատուցող կազմակերպությունից կպահանջվի նաև ապահովել պատվիրատուի համակարգերի նվազագույն պահանջները (վերջնական օգտվողների համակարգիչներ, պրոցեսոր, RAM, պահեստավորում, գրաֆիկական քարտ, բջջային հեռախոսի մասնագրեր և այլն) և բրաուզերի տարբերակի համատեղելիության մասին տեղեկություններ:

### **8. Արդյունքների ներկայացման ամսաթվեր**

e-Disability տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսված հիմնական աշխատանքները պետք է իրականացվեն հետևյալ հիմնական փուլերով՝

**Առաջին փուլ՝ Հետազոտություն և պահանջների սահմանում**

**Երկրորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի մշակում 7.2. կետով սահմանված API-ի մշակում/ծրագրավորում և Տվյալների հավաքագրման նախատիպերի ստեղծում մոդուլների շրջանակներում**

**Երրորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի մշակում 7.2. կետով սահմանված Վինետ մասնագետների և բժշկական փորձագետների բանկ ենթահամակարգի կառավարման, Ծառայությունների անհատական ծրագրի ենթահամակարգի բազային և Միգրացիա մոդուլների շրջանակներում,**

**Չորրորդ փուլ՝ Տեղակայում, փաստաթղթավորում, թեստավորում և վերապատրաստում Հինգերորդ փուլ՝ Տեղեկատվական համակարգի հանձնում պիլոտային շահագործման**

**Առաջին փուլ՝ Հետազոտություն և պահանջների սահմանում**

#### **Պահանջների բացահայտում՝ հետազոտություններ և ուսումնասիրություններ**

- Հանդիպումներ և քննարկումներ ոլորտի պատասխանատուների հետ
- ՏՀ-ի բիզնես պահանջների ուսումնասիրություն
- ՏՀ-ի տեխնիկական պահանջների ուսումնասիրություն
- ՏՀ-ի օգտվողների դերերի տիպերի ուսումնասիրություն
- ՏՀ-ում ներառվելիք տվյալների ծավալի ուսումնասիրություն:

#### **Տեխնիկական լուծումների սահմանում**

- ՏՀ-ի առանձնահատկությունների սահմանում
- Տեղեկատվության դասակարգում և օգտվողների իրավասությունների սահմանում
- ՏՀ-ի սերվերների, հեռահաղորդակցության ցանցի բաղկացուցիչ մասերի, տեխնիկական և ծրագրային միջոցների պահանջների սահմանում
- Աշխատանքային կայանների տեխնիկական և ծրագրային միջոցների պահանջների սահմանում
- Տեխնիկական առաջադրանքի նախագծում և մշակում

#### **Առաջին փուլի աշխատանքների իրականացման ակնկալվող արդյունքներ**

